ՀՅԴ Պատմութիւն

ԴՐՕՇԱԿ

Մարտ N03 (1630)

2011

Կարոսի կիսանդրին Պռոշյան ավանում

ԱՄՆ, Կալիֆոռնիա, Մոնտեբելլո տանող մայրուղի, 2011թ. մարտ

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմական

«Դրօշակ»
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**

Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի

Ձեւավորումը՝ **Ա. Գրիգորյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Մհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Կանոն թէ՞ օրէնք, խաղ թէ՞ պայքար 2

Սոցիալ-տնտեսական

Բնակչության եկամուտները և գնաճը 4

ՀՀ Ազգային ժողով

Ընտրական օրենսգիրք 11

Պատմաբանական

1921 թ. Փետրվարյան ապստամբության բնույթի

և շարժիչ ուժերի հարցերը հայ պատմագրության մեջ 14

ԼՂՀ հիմնահարց

Ավիացիան Հայաստանում 24

Հուշագրություն

Պահնորդական պետի հուշերը 32

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Հազուագիւտ տօն 44

Նոր գրքեր

Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձա-

նագրություններ, 1918-1920 թթ. 46

Պատկերասրահ

Անատոլի Ավետյան 48

Digitized by ARF PR Office

Կանոն թէ՞ օրէնք, խաղ թէ՞ պայքար

Հայաստանի նախընտրական քաղաքական դաշտի շրջագիծն աստիճանաբար աւելի ընկալելի է դառնում: Ընդհանուր հենքը հասարակական ամենալայն շրջանակներում, մի քանի տարիների ընթացքում ձեւաւորուած ենթակայական այն մօտեցումն է, համաձայն որի՝ «ամեն ինչ կանխորոշուած է», «սրանք նախօրօք մտածուած խաղեր են» եւ այլն: Ըստ այս ենթակայական մօտեցման՝ Հայաստանի քաղաքական քսանամեայ վերնախաւը նախատեսում է քաղաքական բոլոր քայլերը եւ ի գործ դնում համապատասխան հնարքներ: Կան շօշափելի թուով մարդիկ, ովքեր ոչ միայն Հայաստանի քաղաքական դաշտը, այլ նաեւ ֆուտբոլը, համաշխարհային քաղաքականութիւնը եւ նոյնիսկ ցունամին ու Ֆուկոսիմայի ատոմային պայթիւնը պարզապէս «խաղ» են որակում: Այս մտածողութիւնն ունեցողների պատկերացմամբ մարդը չեզոք էակ է՝ բանականութիւնից, գիտակից կամքից միանգամայն զուրկ: Քաղաքական ճակատագրապաշտութեան եւ սնոտիապաշտական այս մթնոլորտում բազմաթիւ վերլուծաբաններ զբաղուած են պայծառատեսութեամբ, քաղաքական գործիչներից շատերը՝ «թուղթ ու գիր» անելով, դեղատոմսեր մատուցելով, իսկ կուսակցութիւնները մեծամասամբ նմանւում են բուքմեյքերական գրասենեակներից:

Այս մօտեցումը ձեռնտու է Հայաստանի քաղաքական վերնախաւին, այսինքն՝ եւ՛ գործող իշխանութիւնների, եւ՛ ծայրայեղ ընդդիմութեան առանցքային ուժերին, որոնք այս ընդհանուր համայնապատկերի վրայ մոգոնում են իրենց «խաղ»-երը եւ արդէն մշակում այդ «խաղ»-երի «կանոն»-ները: Նրանց նոյնիսկ չի մտահոգում, թէ իրենց գործածած բառամթերքը, սկզբունքների կոպիտ խախտումներին առընթեր, ինչպիսի քայքայիչ հետեւանքներ է թողնում հասարակական կարծիքի վրայ: Սահմանադրութեան տառով նախատեսուած օրէնքները, մինչեւ իսկ, անուանւում են «խաղի կանոն», բազմակարծութեան, բազմակուսակցականութեան եւ քաղաքական պայքարի հասկացութիւններն ու սկզբունքները բռնաբարւում, ոտնահարւում եւ այլանդակւում են ամենուրեք՝ շախմատի, բռնցքամարտի կամ այլ երկկողմ մրցատեսակների հետ զուգահեռներ անցկացնելով: «Խաղի կանոն» է համարվում եւ հալած իւղի տեղ հրամցւում նաեւ համապետական ընտրութիւնների արդիւնքների յարաբերակցական պատկերի կանխայայտ պահպանումը...

Այնինչ «խաղ»-ը ընդամենը գործելու իմիտացիա է, իսկ «խաղի կանոն»-ը՝ իմիտացիոն գործընթացի արդարացումը, օրինականացումը: Ներկայիս քաղաքական

կեցուածքներն ու տեսակէտներն այնպիսի դրսեւորումներ են ունենում, որ առաջին հայեացքից, կարծես, ամեն ինչ տեղաւորւում է նախատեսուած «խաղ»-ի շրջագծում եւ ընթանում խաղի «կանոններ»-ով: Իսկ երկկողմ շախմատի կամ բռնցքամարտի փոխարէն քաղաքական ինքնուրոյն պայքարի ելած եւ, կամ «խաղի կանոններ»-ի փոխարէն, սահմանադրական օրէնքին հաւատարիմ ուժեր, ԶԼՄ-ների մեծ մասի հաւաստմամբ, առհասարակ «չկան», խաղից դուրս լոկ կրօնական ծեսերով են զբաղուած, իսկ քաղաքական բեմահարթակում կամ խաղացող չեն, կամ գրազ կապող են միայն...

Սակայն, իրականութիւնն այլ բան է ասում մեզ: Օրինակ, ՀՅԴ-ին փնովելու եւ «Ժառանգութեանը» խրատելու աւանդոյթն արդէն անհետացել է ծայրայեղ ընդդիմութեան լրատուամիջոցներից: Նրանք, հնարաւորինս, խուսափում են խորհրդարանական ընդդիմութեան թեմային անդրադառնալուց, քանզի հասկանում են, որ իշխանութիւնների առանցքային ուժերը նրանց անունը լսել անգամ չեն ցանկանում: Ընտրական օրէնսգրքի մէջ փոփոխութիւնների առաջարկներն ամբողջապէս տապալուեցին «բիոմասսայի» քուէարկութեան միջոցով, առանց մանրամասների մէջ մտնելու, առանց խորքային քննարկումների... Ինչո՞ւ հանրապետական «տեսաբան»-ների համար անհրաժեշտ չեղաւ նոյնիսկ մի փոքր «քեալլա տալ», եւ ինչո՞ւ ՀԱԿ-ը ոչ մի տեսակէտ էլ չյայտնեց այդ կապակցութեամբ: Պատասխանը պարզ է, հակառակ դէպքում կը կարեւորուէր եւ «դիւիդենդներ» կը շահէր խորհրդարանական ընդդիմութիւնը, ով, ըստ քաղաքական էլիտայի, ոչ խաղացող է եւ ոչ էլ «գրազ կապող»:

«Հայ-թուրքական պրոտոկոլներ»-ի ժամանակ, երբ մենք զգուշացնելով՝ զգուշացնում էինք, որ ականապատուած են արձանագրութիւնները, որ նախապայմաններ կան նրանց մէջ, հանրապետականները մեզ, եւ մեզ հետ նաեւ տասնմէկ միւս կազմակերպութիւններին, ներկայացնում էին որպէս հակաթուրք հիստերիա բարձրացնողների, նեղ նացիոնալիստական քաղաքականութեան հետեւորդների: Այժմ նոյն այդ գործիչները, տեղի ու անտեղի, ժամանակին կամ անժամանակ, բառացիօրէն, կրկնում են մեր հիմնաւորումները: ՀԱԿ-ականներն անհեթեթութիւն էին համարում արտգործնախարարի հրաժարականի մեր պահանջը, ասելով, որ «արտաքին քաղաքականութեան գլխաւոր պատասխանատուն ՀՀ նախագահն է»: Այժմ նրանք պահանջում են վարչապետի, փոխվարչապետի եւ մի շարք այլ պաշտօնեաների հրաժարականը՝ իհարկէ ՀՀ նախագահին «անկիւն սեղմելու մտադրութիւն» չունենալով:

Անշուշտ կը գայ մի օր, երբ Ընտրական օրէնսգրքի եւ համակարգի մասին մեր դիտողութիւններն ու սկզբունքային դիրքորոշումները, կ'արտաբերուեն քաղաքական վերնախաւի բերանից: Սակայն առայժմ այդ դիրքորոշումները հակասում են նրա «խաղի կանոն»-ներին եւ դիտողութիւններ անողները դուրս են «խաղ»-ից:

Պէտք է վերջ դնել քաղաքական վերնախաւի տուեալ «խաղ»-երին եւ դրանց հենք հանդիսացող ենթակայական մօտեցումներին, որոնք չեն յանգեցրել եւ չեն էլ յանգեցնելու այն առաջընթացին, որ օդի ու ջրի պէս անհրաժեշտ է՝ աշխարհի ժողովրդավարական երկրների շարքում արժանի տեղ գրաւելու համար:

Բնակչության եկամուտները և գնաճը

Բենիամին Միրզոյան

Հիրավի, յուրաքանչյուր ընտանիքի համար չկա ավելի կենսական հարց, քան առաջին անհրաժեշտության ապրանքների ու ծառայությունների գները ու սակագները, դրանց փոփոխությունը: Որքանո՞վ են դրանք մատչելի բնակչության լայն խավերի, աշխատավարձով ու թոշակով ապրող ընտանիքների համար: Այդ հարցը հատկապես սուր բնույթ է ստացել տնտեսական ճգնաժամի պայմաններում, դառնալով միաժամանակ քաղաքական շահարկումների առարկա:

Փորձենք վիճակագրական տվյալների հիման վրա պարզել, թե ինչպիսի իրական փոփոխություններ են տեղի ունենում ՀՀ բնակչության եկամուտների կառուցվածքում և սպառողական շուկայում, որքանով է սոցիալական տարբեր խմբերի եկամուտների ավելացումը փոխհատուցում պարենային ապրանքների ու ծառայությունների գնաճը:

Բնակչության եկամուտների կառուցվածքը

Եթե դատենք տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտությունների (ՏՏԿԱՀ) տվյալներով, ապա հայկական ընտանիքի եկամուտների կառուցվածքն ունի հետևյալ պատկերը (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ տնային տնտեսությունների եկամուտները 2004 թ., 2008 թ. և 2009 թ.

	Տնային տնտեսություն մեկ շնչի հաշվով, միջին ամսական					
	Դրամ			%		
	2004	2008	2009	2004	2008	2009
1. Դրամական եկամուտներ այդ թվում՝	14450	26866	28038	85,7	90,8	91,8
վարձու աշխատանք	7009	14491	15328	41,6	49,0	50,2
ինքնազբաղվածություն	1158	2385	1534	6,9	8,1	5,0
գյուղմթերքի և անասունի վաճառք	1603	1771	1667	9,5	6,0	5,5
պետական թոշակներ և նպաստներ	1962	4870	5615	11,6	16,5	18,4
օգնություն բարեկամներից	1817	2692	2669	10,8	9,1	8,7
այլ եկամուտներ	901	657	1225	5,3	2,1	4,0
2. Ոչ դրամական եկամուտներ	2406	2710	2503	14,3	9,2	8,2
Ընդամենը՝ ամբողջական եկամուտ	16856	29576	30541	100	100	100

Աղբյուրը. «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», 2010 թ., էջ 114

ՏՏԿԱՀ-ի արդյունքները թույլ են տալիս անել հետևյալ եզրակացությունները.

1. Բնակչության ամբողջական եկամուտի կազմում աճում է դրամական եկամուտների, մասնավորապես աշխատավարձի, թոշակների ու նպաստների մասնաբաժինը, որոնց տեսակարար կշիռը քաղաքային բնակավայրերի ընտանիքների բյուջեում 2009 թ. կազմել է 78,1%, իսկ գյուղական բնակավայրերում՝ 47,2%: Հատկապես պակասել է ինքնազբաղվածությունից, այլ կերպ՝ մանր ու փոքր բիզնեսից գոյացող եկամուտը: Գրեթե անփոփոխ է մնացել Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացած դրամական օգնությունը (մեկ շնչի հաշվով ամսական 2008 թ.՝ 2243, 2009 թ.՝ 2315 դրամ):

2. Մտահոգություն է առաջացնում գյուղատնտեսական գործունեությունից գոյացող եկամուտների նվազման միտումը գյուղական ընտանիքներում: 4,2

շնչից բաղկացած գյուղական ընտանիքի 1,5 անդամը զբաղվում է երկրագործությամբ, բայց ստացած եկամուտը (գյուղմթերքների ու անասունների վաճառք, սննդամթերքի սպառում սեփական տնտեսությունից) 2009 թ. կազմել է ամսական 43,1 հազ. դրամ՝ գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների ամբողջական եկամտի 35,7%-ը (2004 թ.՝ 51,6%, 2008 թ.՝ 38,9%): Հիշեցնենք, որ կոլտնտեսականի ընտանիքի եկամտի 2/3–ը 1986-1987 թթ. գոյացել է գյուղատնտեսական գործունեությունից:

3. Նույն ՏՏԿԱՀ-ի տվյալներով, վերջին 5 տարում (2005-2009 թթ.) բնակչության ամենից աղքատ 10% (առաջին դեցիլ) ընտանիքների ամսական դրամական եկամուտներն ավելացել են ավելի արագ տեմպերով (մոտ 2,3 անգամ), քան ամենից ապահով 10%-ի (10-րդ դեցիլ) ընտանիքների դրամական եկամուտները (1,6 ամգամ): 2004-2009 թթ. ընթացքում ավելացել է աշխատանքից ստացած եկամուտների տարբերությունը 10-րդ և առաջին դեցիլային խմբերում (2004 թ.-ի 98 անգամից 2009-ին կազմելով 117 անգամ): Մինչդեռ տրանսֆերտներից ստացված եկամուտների տասներորդ և առաջին դեցիլային խմբերում տարբերությունը կրտրուկ կրճատվել է 2004 թ.-ի 57 անգամից 2009 թ.-ին կազմելով ընդամենը 30 անգամ: Պետական տրանսֆերտները եկամտի հիմնական աղբյուր են հանդիսանում հենց առաջին դեցիլային խմբի տնային տնտեսությունների համար (2009 թ.՝ 51,5%), մինչդեռ տասներորդ դեցիլային խմբում եկամտի այդ աղբյուրի մասնաբաժինը շատ փոքր է (10,1%):

4. Եթե դատենք աղքատության և կենսամակարդակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականներով, ապա 2009 թ. հարցվողների 17,9%-ն են իրենց համարել աղքատ, այդ թվում 2,3%-ը՝ ծայրահեղ աղքատ: Միջինից ցածր կենսամակարդակ են ունեցել 37,3%-ը, միջին՝ 41,3, միջինից բարձր՝ 3,4, հարուստ՝ 0,1%-ը: Սակայն նույն հարցումներից պարզվում է, որ շատ լավ ապրելու համար անհրաժեշտ է մեկ շնչի հաշվով ամսական ունենալ 632,6 հազ. դրամ (1741 ԱՄՆ դոլար), լավ ապրելու համար՝ 171,7 հազ. դրամ (473), գոյատևելու համար՝ 53362 դրամ (147): Եթե հիմք ընդունենք այդ գնահատականները, ապա հանրապետության բնակչության ավելի քան 80%-ը գոյատևում է: Անգամ տասներորդ դեցիլային խմբի տնային տնտեսությունների ամսական դրամական եկամուտը 2009 թ. մեկ շնչի հաշվով կազմել է 76508 դրամ (9-րդում՝ 45723 դրամ):

5. ՏՏԿԱՀ-ի տվյալներից կարելի է անել նաև եզրակացություն, որ ՀՀ-ում դեռևս չի ձևավորվել սոցիալական միջին խավ, իսկ եկամուտների տարբերությունն ունի մեղմացման միտում: Այսպես, բնակչության ամենահարուստ (10-րդ դեցիլ) և ամենաաղքատ (առաջին դեցիլ) խմբերի դրամական եկամուտների տարբերությունը մեկ շնչի հաշվով 2004 թ. կազմել է 21 անգամ, 2005 թ.՝ 17,8, 2008-2009 թթ.՝ 14,3 անգամ: Եկամուտների համակենտրոնացման գործակիցը (Ջինի ինդեքս) 1999 թ. կազմել է 0,593, 2002 թ.՝ 0,451, 2006 թ.՝ 0,369, 2008 թ.՝ 0,389, 2009 թ.՝ 0,382: Ստացվում է այնպիսի տպավորություն, որ սոցիալական բևեռացման ցուցանիշով Հայաստանը մոտենում է Եվրոմիության երկրների չափանիշներին: Իրականում բնակչության հարուստ խավի եկամուտները չեն արտացոլվում ՏՏԿԱՀ-ի արդյունքում:

Որքանով են թաքցվում եկամուտները

Անցումային շրջանում Հայաստանում ձևավորվել է անկառավարելի ու վայրի շուկայական տնտեսություն: Առաջացել է չհաշվարկվող հսկայական ստվերային տնտեսություն: Միաժամանակ կաշառակերությունն ընդունել է այնպիսի համաստարած ու սարսափելի չափեր, որ վիճակագրությունն անկարող է բացահայտել սոցիալական տարբեր խմբերի իրական եկամուտների ու ծախսերի բևեռացման աստիճանը:

Տնային տնտեսությունների հարցումների ժամանակ գրեթե բոլոր ընտանիքները հակված են թաքցնելու իրենց եկամտի աղբյուրը: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) ստիպված էր բնակչության կենսամակարդակն ու աղքատության աստիճանը որոշելու համար օգտագործել հարցման

ժամանակ սպառման մասին ցուցանիշը, ենթադրելով, որ այն «ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում»:

Այսպես, տնային տնտեսությունների սպառման ծախսերը 2004 թ. մեկ շնչի հաշվով ամսական կազմել են 19251 դրամ, իսկ եկամուտները՝ 16856 դրամ (14,2%-ով ավելի), 2005 թ. համապատասխանաբար՝ 21109 և 18725 (12,7%-ով ավելի), մինչդեռ 2009 թ.՝ 27667 և 30541 դրամ (9,4%-ով պակաս, քան եկամուտը): Դժվար չէ նկատել, որ այստեղ որոշակի օրինաչափություն չկա: Ավելին, 2008 և հատկապես 2009 թ. հարցումների ժամանակ եկամուտները զգալիորեն գերազանցել են ծախսերը և գնահատման ավելի բարձր ցուցանիշ է արձանագրվել:

Համեմատաբար արժանահավատ տեղեկատվություն է ստացվում կենսաթոշակների և նպաստների վերաբերյալ, որոնց գումարը 2008 թ. համախմբված բյուջեի ծախսերում կազմել է 207,9 մլրդ., իսկ 2009 թ.՝ 241,6 մլրդ. դրամ: Եթե հաշվարկների համար հիմք ընդունենք հանրապետության առկա բնակչության թվաքանակը (3,0 մլն. մարդ), ապա հարցումների ժամանակ պետական թոշակներից ու նպաստներից գոյացող եկամուտը 2008 թ. կազմել է 175,3 մլրդ. (15,7%-ով պակաս, քան իրական գումարը), իսկ 2009 թ.՝ 201,1 մլրդ. դրամ (15,6%-ով պակաս):

Աշխատավարձը զարգացած երկրներում հանդիսանում է բնակչության կենսագործունեության հիմնական աղբյուրը: Օրինակ, ԱՄՆ-ում ՀՆԱ-ի 73%-ը ձևավորվում է աշխատավարձի հաշվին: Հայաստանի ՀՆԱ-ում վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը 2008 թ. կազմել է 37,2% (1328,4 մլրդ. դրամ), մինչդեռ տնային տնտեսությունների ամբողջական եկամտի կազմում՝ 49% (556,5 մլրդ. դրամ) Տարբերությունը՝ մոտ 2,4 անգամ:

Բանն այն է, որ Հայաստանում զգալի տեսակարար կշիռ ունի թաքնված (ոչ ֆորմալ) զբաղվածությունը, որից գոյացող եկամուտը, մեր հաշվարկներով, կազմում է ՀՆԱ-ի շուրջ 3%-ը՝ գրեթե այնքան, որքան պարտադիր սոցիալական ապահովության վճարները: Հարցումների ժամանակ այդ կարգի աշխատողները ներկայանում են որպես գործազուրկ, խեղճ ու կրակ աղքատ մարդ:

Միաժամանակ ընտանեկային հեռազոտությունները բոյկոտում են բարձր աշխատավարձ ստացող չինովնիկները, իրավապաշտպանության բնագավառի ջոջերը, ֆինանսավարկային համակարգի վերնախավը:

Հարցումների ժամանակ յուրաքանչյուր ընտանիք հակված է ցույց չտալու նաև հանրապետությունից դուրս ապրող բարեկամներից ստացվող ֆինանսական օժանդակության իրական գումարը, որը, տարբեր գնահատականներով, հասնում է 2,0-2,5 մլրդ. ԱՄՆ դոլարի: Մինչդեռ, Աղյուսակ 1-ում բերված տվյալներով, այդ նույն աղբյուրից գոյացող գումարը 2008 թ. կազմել է 86,1 մլրդ. դրամ ($ 282 մլն.), իսկ 2009 թ.՝ 88,9 մլրդ. դրամ ($ 245 մլն.):

Տնային տնտեսությունների դրամական եկամուտների կառուցվածքում կա մի հոդված՝ «Սեփականություն (վարձակալական վճարներ, տոկոսավճարներ, շահութաբաժիններ)», որի տեսակարար կշիռը ամբողջական եկամտի մեջ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» տարեկան բոլոր զեկույցներում մնում է անփոփոխ (0,1%): Այդ ծիծաղելի ու խայտառակ ցուցանիշը ստացվում է այն պատճառով, որ հանրապետության մեծահարուստները հրաժարվում են հարցումներին մասնակցելուց: Ընդ որում հրաժարման ամենաբարձր մակարդակը գրանցվում է Երևանում (ցուցակում ընդգրկվածների 20%-ը):

Գործը հասել է նրան, որ ՀՀ ԱՎԾ-ն իր վերջին զեկույցում (2010 թ.) դիմում է մեծահարուստներին խնդրանքով. «Ձեր մասնակցությունը ցուցաբերելիք աղագայում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությանը», երաշխավորելով «տեղեկությունների գաղտնիությունը»:

ՀՀ ազգային հաշիվների տվյալներով, տնտեսության զուտ շահույթը և զուտ խառը եկամուտը 2008 թ. կազմել է 1,410 մլրդ. դրամ: Եթե դրանից հանենք գյուղատնտեսության (ներառյալ որսորդության և անտառնտեսության) ոլորտում գոյացող նույն եկամուտը, ապա ստացվում է 1,050 մլրդ. դրամ: Ընդունենք, որ այդ գումարի մեջ է մտնում ինքնազբաղվածությունից ստացած եկամուտը: Հաշվի առնելով նաև այդ գործոնը, կարելի է ասել, որ մոտ 1 տրլն. դրամ (հաշվարկվող ՀՆԱ-ի գրեթե 30%-ը) չի արտացոլվում ՏՏԿԱՀ-ի արդյունքներում:

Իրական եկամուտների փոփոխությունը

Բնակչության կողմից փաստացի սպառված նյութական և հոգևոր բարիքների մակարդակը մեծապես կախված է առկա ռեսուրսներից, սպառողական գների և տնային տնտեսությունների եկամուտների աճի հարաբերակցությունից: Եթե դատենք վիճակագրական տվյալներով, ապա հանրապետության անկախության 20 տարիների ընթացքում աշխատավարձի և կենսաթոշակի իրական փոփոխությունն ունեցել է հետևյալ պատկերը (1990 թ.=100):

Դժվար չէ նկատել, որ անկախության առաջին տարիներին աշխատավարձով և կենսաթոշակով ապրող ընտանիքները հայտնվել են ծայրահեղ աղքատության ճիրաններում: Սպառողական գները 1991-1996 թթ.

Աղյուսակ 2

	1994	1996	2000	2004	2006	2008	2009	2010
Միջին ամսական աշխատավարձ	6,9	10,8	21,0	34,5	47,7	58,8	62,5	65,5
Միջին ամսական կենսաթոշակ	12,8	8,7	9,3	15,5	18,7	32,2	35,7	35,7
Նվազագույն աշխատավարձ	4,7	3,1	14,9	33,1	36,9	54,1	62,7	58,0

թռել են 72,4 հազ. անգամ, զրկելով բոլոր ընտանիքներին նաև Խնայբանկի հիմնարկներում ունեցած ավանդներից, որոնց գումարը 1990 թ. վերջին կազմել է 5861 մլն. ռուբ. Դա հավասարազոր է 2010 թ. 4 տրլն. դրամին կամ մոտ 11 մլրդ. ԱՄՆ դոլարին:

Աղյուսակի տվյալներից միաժամանակ երևում է, որ միջին ամսական իրական աշխատավարձը վերջին 10 տարում (2001-2010 թթ.) ավելացել է 3,4 անգամ, իսկ իրական կենսաթոշակը և նվազագույն աշխատավարձը՝ 3,9 անգամ: Սակայն այդ ամենը բավարար չի եղել վերականգնելու սոցիալական այդ կարևորագույն ցուցանիշների 1990 թ. մակարդակը: Ընդ որում պետք է նկատի ունենալ այն կարևոր հանգամանքը, որ սոցիալիստական կարգերում աշխատավարձի իրական մակարդակը բարձրանում էր 30-32 տոկոսով՝ սպառման հանրային ֆոնդերի հաշվին, կազմելով բանվոր-ծառայողների ընտանիքի բյուջեի գրեթե 80%-ը: Այնուհետև, հաշվի պետք է առնել նաև այն փաստը, որ ներկայիս միջին աշխատավարձի տակ թաքնված է անչափ մեծ և ոչնչով չհիմնավորված խիստ տարբերությունը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների: Մյուս կողմից, անցումային շրջանում առաջացել է գործազուրկների հսկայական

բանակ: Այս գործոնների հաշվարկման դարագլխում, կարելի է եզրակացնել, որ բնակչության մեծամասնության աշխատավարձն անկախության 20 տարիներին արժեզրկվել է շուրջ 3 անգամ:

Վերցնենք չարաբաստիկ նվազագույն աշխատավարձը, որի ավելացումն ընդամենը 2,5 հազ. դրամով աղմուկ բարձրացրեց ՀՀ Ազգային ժողովում քննարկումների ժամանակ: Նվազագույն աշխատավարձի չափը 1990 թ. սահմանված էր 75 ռուբ., հաշվի առնելով նաև լրացուցիչ հավելավճարները և արտոնությունները՝ 100 ռուբլի, ինչը համարժեք է 2010 թ. 70 հազ. դրամին (2,2 անգամ բարձր, քան անկախ Հայաստանի Սահմանադրությամբ երաշխավորված քաղաքացու նվազագույն կենսամակարդակը):

Այդ առումով էլ ավելի անելանելի ու թշվառ իրավիճակում են հայտնվել կենսաթոշակառուները, որոնց թվաքանակը 1990 թ. կազմել է 525,4 հազ., իսկ 2009 թ.՝ 522,8 հազ. մարդ: Նույն մեթոդով հաշվարկման արդյունքում ստացվում է, որ կենսաթոշակի միջին ամսական չափը 1991-2009 թթ. արժեզրկվել է մոտ 4 անգամ: Իրականում թոշակառուների մի զգալի մասը (12,5%) աշխատում է, միայնակ չի ապրում, ստանում է որոշ եկամուտ գյուղատնտեսական գործունեությունից, ֆինանսական օժանդակություն այլ երկրներում ապրող հարազատներից, բարեգործական ընկերություններից, «Փարոսից»: Այս ամենն ինչ-որ չափով մեղմացնում են կենսաթոշակառուների սոցիալական իրավիճակը:

Արժանավայել ապրելու իրավունքից զրկված է նաև գյուղի աշխատավորը: Կոլտնտեսականի աշխատանքի ամսական վարձատրությունը (դրամական և ոչ դրամական) 1988 թ. կազմել է 181 ռուբ., 2009 թ. համադրելի գներով՝ 115 հազ. դրամ: Մինչդեռ, ՏՏԿԱՀ-ի տվյալներով, գյուղատնտեսական գործունեությունը նույն թվականին գյուղական տնային տնտեսության մեկ աշխատողի հաշվով բերել է 28 հազ. դրամի ամսական եկամուտ: Եթե անգամ ընդունենք, որ այդ ցուցանիշը 2 անգամ թերագնահատվում է, ապա կոլտնտեսականի ու հողատեր գյուղացու աշխատանքի արտադրողականության և վարձատրության տարբերությունը կազմում է ավելի քան 2 անգամ: Հաշվի առնելով նաև կոլտնտեսության շահույթը և անձնական օժանդակ տնտեսությունից ստացած եկամուտը, գալիս ենք այն եզրակացության, որ անկախության տարիներին գյուղի աշխատավորի կենսամակարդակը նվազել է 3-3,5 անգամ:

Տնային տնտեսությունների ծախսերը

Տնային տնտեսությունների սպառողական ծախսերը ներառում են պարենային ապրանքները, ալկոհոլային խմիչքը, ծխախոտը, ոչ պարենային ապրանքները և ծառայությունները: ՏՏԿԱՀ-ի 2009 թ. տվյալներով բոլոր այդ ծախսերի գումարը կազմել է մեկ շնչի հաշվով ամսական 27667 հազ. դրամ, որից սննդի հայթայթման համար՝ 14145 (51,1%), ալկոհոլային խմիչք՝ 238 (0,9), ծխախոտ՝ 1035 (3,7), ոչ պարենային ապրանքներ՝ 4294 (15,5), ծառայություններ՝ 7955 (28,8%):

Տնային տնտեսությունների ծախսերը համարվում են հարաբերականորեն ավելի վստահելի ցուցանիշ բնակչության աղքատության մակարդակը և սոցիալական բևեռացումը գնահատելու համար: Այսպես, 2009 թ. 10% առավել ապահովված և 10% նվազագույն ապահովված բնակչության եկամուտների հարաբերակցությունն ըստ սպառողական ծախսերի կազմել է 8 անգամ, իսկ ըստ դրամական եկամուտների՝ 14,3 անգամ: Այստեղից էլ կարելի է անել եզրակացություն, որ Հայաստանը, իրոք, «սոցիալական պետություն է», որտեղ բնակչության ամենահարուստ 10%-ը յուրացնում և ծախսում է ազգային եկամտի ընդամենը 27%-ը, կատարելով միաժամանակ հսկայական կապիտալ ներդրումներ ու բարեգործական նվիրատվություններ:

Սակայն իրականությունն այն է, որ տնային տնտեսությունների հետազոտության ժամանակ չեն արտացոլվում մեծահարուստների ոչ միայն եկամուտները, այլև ծախսերը:

Այսպես, ՀՀ ազգային հաշիվների մեջ տնային տնտեսությունների ծախսերը 2008-ին կազմել են 2.549,4 մլրդ. դրամ (ՀՆԱ-ի 71,4%): Մինչդեռ ՏՏԿԱՀ-ի տվյալներով՝ տնային տնտեսությունների սպառողական ծախսերը 2008 թ. կազմել են 1.039,6 մլրդ.

դրամ: Տարբերությունը, ինչպես տեսնում ենք, մոտ 2,5 անգամ է:

Պարենային ապրանքների մանրածախ առևտուրը 2009 թ. բնակչության 1 շնչի հաշվով ամսական կազմել է 15947 դրամ, ալկոհոլային խմիչքներինը՝ 1970 դրամ, մինչդեռ ՏՏԿԱՀ-ի տվյալներով, համապատասխանաբար, 14145 և 238 դրամ: Եթե հաշվի առնենք նաև սննդամթերքի (այդ թվում նաև խմիչքի) սպառումը սեփական տնտեսությունից, որը պարենային ապրանքների շրջանառության մեջ չի արտացոլվում, ապա սննդամթերքի իրական սպառումը մոտ 30%-ով ավելի է, քան ցույց է տրվում հարցումների ժամանակ:

Ոչ պարենային ապրանքների գնման համար 2009 թ.-ին տնային տնտեսության մեկ շնչի հաշվով ամսական ծախսվել է 4294 դրամ, մինչդեռ դրանց շրջանառության նույն ցուցանիշը 11378 դրամ է, տարբերությունը՝ ավելի քան 2,6 անգամ: Միակ ապրանքը, որի գնման համար տնային տնտեսության անդամները ծախսում են ահավոր մեծ գումար, քան ցույց է տալիս ընթացիկ վիճակագրությունը, ծխախոտն է: Ցարաբաստիկ այդ ապրանքի գնման համար յուրաքանչյուր 4 շնչից բաղկացած միջին ընտանիքը 2009 թ. ծախսել է 49,7 հազ. դրամ, մինչդեռ առողջությունը պահպանելու համար՝ 42,6 հազ. դրամ:

Ի դեպ, «Առողջապահություն» հոդվածով 2004 թ. ծախսվել է տնային տնտեսության 1 շնչի հաշվով ամսական 1500 դրամ, 2008-ին՝ 1035, 2009 թ.-ին՝ 888 դրամ: Նույն 5 տարում (2005-2009 թթ.) բուժպասարկման սակագները աճել են 56,8 %-ով: Հետևաբար, բնակչության իրական ծախսերն այդ ոլորտում կրճատվել են 2,6 անգամ: Այդ ահավոր ցուցանիշը կարելի էր ողջունել միայն այն դեպքում, եթե բուժպասարկումը նույն 5 տարիներին դառնար ամբողջովին անվճար: Մինչդեռ, պետական բյուջեի հաշվին առողջապահության համար իրական ծախսումները 2005-2009 թթ.-ին ավելացել են ընդամենը 45%-ով:

Ինչ կարելի է գնել աշխատավարձով և թոշակով

Տնտեսապես աղքատ ու ցածր եկամուտ ունեցող երկրներում իրական աշխատավարձի կամ թոշակի փոփոխությունը մեծապես կախված է առաջին անհրաժեշտության ապրանքների ու ծառայությունների գնաճի տատանումներից: Որքան էլ հացի գինը բարձրանա, ընտանիքը չի կարող դրանից հրաժարվել: Բավական է նշել, որ մեզնից յուրաքանչյուրը 2009 թ. միջին հաշվով օրական սպառել է 461 գրամ հացամթերք, որի էներգետիկան կազմել է 1355 կկալ՝ ծախսած ամբողջ էներգետիկայի (2232 կկալ) 61%-ը, սպառված սննդամթերքի արժեքի 31%-ը:

Տեսնենք, թե միջին ամսական աշխատավարձով ինչքան առաջին անհրաժեշտության պարենային ապրանքներ կարելի էր գնել հանրապետության անկախության տարբեր տարիներին:

Աղյուսակ 3

	1995	2000	2005	2008	2009	2010
Միջին ամսական աշխատավարձ (հազ. դր.)	7,1	22,7	52,1	87,4	96,0	108,9
Անհրաժեշտ կարելի է գնել (կգ)						
Հաց (ցորենի ալյուրից)	67,0	88,6	174,5	212,2	255,3	279,2
Կարտոֆիլ	53,5	212,7	411,2	562,4	823,0	598,4
Տավարի միս	7,3	22,4	36,5	55,2	59,5	52,7
Կենդանական յուղ	5,0	16,1	31,9	37,5	40,8	40,3
Կաթ (լ)	35,4	102,8	187,3	320,6	294,1	335,1
Պանիր («Չանախ»)	6,8	18,4	39,2	60,0	65,7	69,7
Ձու (տասնյակ)	15,4	58,1	97,7	156,4	186,0	225,0
Շաքարավազ	24,3	98,6	208,6	360,7	333,8	316,6
Խնձոր	30,8	107,1	148,6	234,4	260,7	214,0

Հաշվարկների աղբյուրը. Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, 2010 թ.՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-դեկտեմբերին:

Դիտարկելով Աղյուսակ 3-ում բերված ուշագրավ թվերը, կարելի է անել հետևյալ համառոտ եզրակացությունը:

1. Հանրապետության անկախության առաջին տարիներին բնակչության լայն խավերի գնողունակությունն իջել էր այն աստիճան, որ անգամ միջին աշխատավարձով կարելի էր գնել կամ հաց, կամ ոչինչ: Նույն 1995 թ. միջին աշխատավարձով (7,1 հազ. դրամ) կարելի էր գնել տղամարդու կիսաճտավոր կաշվե կոշիկ՝ 0,5 հատ, աշնան գարնանային բաճկոն դպրոցական տարիքի տղայի համար՝ 0,7, դպրոցական տարիքի աղջկա զգեստ բամբակյա կտորից՝ 3,5, էլեկտրական արդուկ խոնավացուցիչով՝ 1,1:

2. Եթե բնակչության բարեկեցության բարձրացման չափանիշ ընդունենք հացի գնման մատչելիությունը, ապա 1996-2000 թթ. միջին աշխատավարձի գնողունակության տարեկան աճը կազմել է 5,7%, հաջորդ հնգամյակում (2001-2005 թթ.)՝ 14,5, իսկ վերջինում (2006-2010 թթ.)՝ 9,8%: Վիճակագրությունում տավարի միսը համարվում է այն պարենային ապրանքը, որի գնի հետ համեմատվում են մյուս պա-

ռենամթերքի գները: Նույն ձևով հաշվարկելու դեպքում, մենք սանում ենք մսի գնման գնողունակության միջին տարեկան աճը. առաջին հնգամյակում՝ 25%, երկրորդում՝ 10,2%, երրորդում՝ 7,6%:

3. Այստեղից կարելի է անել հետևություն, որ զգալիորեն բարձրացել է բնակչության կենդանական ծագման պարենամթերք գնելու հնարավորությունը: Եթե 1996 թ. բնակչության մեկ շնչի հաշվով սպառվում էր 8,3 կգ տավարի, թռչնի, խոզի, ոչխարի միս, ապա 2006 թ.՝ 17,2 կգ:

4. Վերջին 2 տարվա, հատկապես 2010 թ. ցուցանիշները առաջացնում են մտահոգություն: 2009 թ. գրանցվել է 14,2% տնտեսական անկում, իսկ 2010 թ.՝ 2,6% աճ: Մինչդեռ պարենային ապրանքների գները 2009 թ. նվազել են 0,9, իսկ 2010 թ.՝ ավելացել 9,4%-ով: Արդյունքում իջել է բնակչության լայն խավերի գնողունակությունը: Այդ մասին են վկայում հետևյալ աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 4

	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Պարենային զամբյուղի ամսական արժեքը (դր.)	18038	18309	20437	23143	23395	24067	29500
Քանի պարենային զամբյուղ կարելի է գնել.							
ա) միջին ամսական աշխատավարձով	2,4	2,8	3,0	3,2	3,7	4,0	3,7
բ) նվազագույն ամսական աշխատավարձով	0,7	0,7	0,7	0,9	1,1	1,2	1,0
գ) միջին ամսական նվաստաթոշակով	0,5	0,5	0,5	0,55	0,9	1,02	0,9

Այս հաշվարկները կատարվել են ՀՀ ԱՎԾ տարեկան զեկույցների հիման վրա, որոնցում բերվում են ՀՀ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի մեկ շնչի համար սահմանված օրական 2412,1 կկալ-ի արժեքը: Աշխատավարձի ու կենսաթոշակի գնողունակությունը 5 տարում (2005-2009 թթ.) բարձրացել է շուրջ 2 անգամ, որը վատ ցուցանիշ չէ:

Այնուամենայնիվ, աղյուսակում բերված թվերից բխում են հետևյալ կարևոր հետևությունները.

1. Միջին վաստակ ունեցող վարձու աշխատողը 2009 թ. կարող է միայն կերակրել 4 շնչից բաղկացած ընտանիքը: Գրեթե նույնքան էլ (մոտ 100 հազ. դրամ) պահանջվում է (հատկապես երիտասարդ ընտանիքներում) գնելու համար ոչ պարենային ապրանքներ և օգտվելու առաջին անհրաժեշտության ծառայություններից: Ընդ որում ընտանիքը նախապես պետք է ունենա բնակարան և ամբողջ տարվա ընթացքում չերազի հանրապետության ներսում կամ դրսում հանգիստն անցկացնելու մասին:

2. Աչքի է զարնում միջին աշխատավարձի համեմատությամբ նվազագույն աշխատավարձի և միջին կենսաթոշակի խիստ տարբերությունը (մոտ 4 անգամ): Դա նշանակում է, որ ցածր աշխատավարձ ստացող անձը և թոշակառուն ինքնուրույն չեն կարող գոյատևել, քանի որ նրանք պարտադրված են կատարել բազմաթիվ այլ անհրաժեշտ ծախսեր: Հիրավի, ավելի թշվառ իրավիճակում է հայտնվել գործազուրկ և ցածր աշխատավարձ ստացող աշխատունակ երիտասարդ սերունդը, որը չի կարող ընտանիք կազմավորել, երեխա ունենալ, արժանավայել կյանքով ապրել և ստիպված է գոյության աղբյուր որոնել այլ երկրներում:

3. Պարենային ապրանքների գների կտրուկ աճը 2010 թ. խիստ բացասական հետևանքներ ունեցավ բնակչության լայն խավերի կենսամակարդակի վրա, կրճատելով աշխատավարձով, կենսաթոշակով, նպաստով ապրող ընտանիքների պարենային ապրանքներ գնելու հնարավորությունը շուրջ 10%-ով: Այսպես, 2010 թ., 2009 թ. համեմատությամբ, մսամթերքի գինը բարձրացել է 14,3%-ով, բանջարեղենինը և կարտոֆիլինը՝ 25,2, շաքարավազինը՝ 19,5, մրգինը՝ 13,5, կենդանական ու բուսական յուղինը՝ 7,7, հացամթերքինը՝ 4,4%-ով:

4. Բնակչության գնողունակության վրա բացասական ազդեցություն ունեցավ նաև ոչ պարենային ապրանքների գների նկատելի բարձրացումը: Եթե 2006-2009 թթ. այդ ապրանքների գները աճել են 12,7, ապա միայն 2010 թ.՝ 9,6%-ով: Անգամ գրենական պիտույքների գները աճել են 19,5%-ով: Ծառայությունների սակագները աճել են 6,8%-ով, այդ թվում բնակարանային կոմունալ՝ 11,5, կենցաղային՝ 13,7, բուժսպասարկման՝ 6,4, կրթության համակարգինը՝ 6,5%-ով:

5. Պարենային ապրանքների գները շարունակում են բարձրանալ նաև 2011 թ.-ին: Որո՞նք են նման ցավալի և լուրջ սոցիալական հետևանքներ ունեցող երևույթի հիմնական պատճառները և ինչպիսի՞ հրատապ հիմնախնդիրներ են ծառանում հանրապետության ագրարային ոլորտի առջև, կփորձենք անդրադառնալ հաջորդ հոդվածում:

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ



ՀՅԴ ֆրակցիան ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն էր ներկայացրել «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի իր տարբերակը (այլընտրանքային), որն, ինչպես և սպասվում էր, մերժվեց Ազգային ժողովի չորրորդ գումարման իններորդ նստաշրջանի 2011 թ. մարտի 21-24-ի նիստերում:

Ստորև տպագրում ենք ՀՅԴ ֆրակցիայի ԱԺ-ին ներկայացված օրենքի նախագծի տեղեկանքհիմնավորումը և որոշ հոդվածներ նախագծից, տեղեկացնելով, որ ամբողջական նախագծին կարելի է ծանոթանալ ՀՀ ԱԺ պաշտոնական կայքում, հետևյալ հասցեով.

http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=4743&Reading=0

Հայաստանի ընտրական օրենսդրության խնդիրների վերաբերյալ առկա են բազմաթիվ հարցադրումներ, որոնք իրենց արտացոլումն են ստացել ԵԽԽՎ-ի բանաձևերում, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում, ՀՀ ԱԺ մարտի 1-2-ի դեպքերն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում, ՀՀ քաղաքական կազմակերպությունների հրաժարակված քաղաքական դիրքորոշումներում:

«Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է ամրագրել ընտրական գործընթացներում արձանագրված ընտրախախտումների կանխարգելման և սահմանափակման մեխանիզմների արդյունավետ գործադրման օրենսդրական հիմքերը:

Առկա բազմաբնույթ խնդիրներից ներկայումս առավել առարկայական են.

- ՀՀ քաղաքական համակարգում կուսակցությունների դերի ոչ բավարար մակարդակը,

- ընտրական հանձնաժողովների ձևավորման, գործունեության և պատասխանատվության անհամապատասխանությունը արդար ընտրություններ անցկացնելու սկզբունքին,

- բազմակի և վերահսկելի (այսպես կոչված «հեծանվային» և «կարուսելային») քվեարկությունների արատավոր պրակտիկայի առկայությունը,

- քվեարկության արդյունքների հաշվառման և բողոքարկման անկատար համակարգը,

- նախընտրական հավասար քարոզչության ապահովման մեխանիզմի անկատարությունը,

- ընտրակաշառքների և ընտրախախտման այլ դեպքերի բացահայտման և կանխարգելման գործում իրավապահ մարմինների լիազորությունների և պատասխանատվության անարդյունավետ համակարգը,

- նախընտրական քարոզչության համար ծախսված գումարների իրական վերահսկողության

մեխանիզմի անկատարությունը,

- թաքնված ընտրակաշառքների բացառման մեխանիզմների բացակայությունը,

- վարչական ռեսուրսի կիրառումը բացառող մեխանիզմների բացակայությունը,

- քաղաքական համակարգում կանանց ներգրավման անբավարար մակարդակը:

Վերը նշված խնդիրների լուծման նպատակով ներկայացվող օրենքի նախագծով նախատեսվում է.

- ՀՀ ԱԺ 100 տոկոս համամասնական ընտրակարգի սահմանում,

- ընդդիմադիր և իշխանական խմբակցությունների հավասար թվով մասնակցության սկզբունքի հիման վրա ընտրական հանձնաժողովների ձևավորման նոր կարգի, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ արագ արձագանքելու պարտականության սահմանում,

- վերահսկելի, բազմակի քվեարկությունների և լցոնումների բացառման նպատակով ընտրական գործընթացի կազմակերպման, քվեարկության և քվեարկության արդյունքների հաշվառման մեխանիզմների կատարելագործում,

- կանանց ներգրավվածության մեծացում ընտրացուցակներում մինչև 30 տոկոս,

և այլն:

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի (5 փետրվարի 1999 թվականի, այսուհետ՝ օրենսգիրք) 2-րդ հոդվածի 6-րդ կետից և 15-րդ հոդվածի 4-րդ կետից «և Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով» բառերը հանել:

Հոդված 2. Օրենսգրքի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետով. «Քվեարկության և հաշվարկի ամբողջ ընթացքը ենթակա է պարտադիր տեսաձայնագրման, որի նպատակով բոլոր ընտրատեղամասերում, առաստաղին, ամրացվում են տեսախցիկներ այնպես, որ մի կողմից դրանց տեսադաշտում գտնվեն առնվազն քվեատուփը, քվեախցիկները և քվեաթերթիկների հանձնման սեղանները, իսկ մյուս կողմից՝ աղահովվի քվեարկության գաղտնիությունը, այսինքն տեսանելի չլինի քվեախցիկի այն մասը, ուր ընտրողները կատարում են իրենց ընտրությունը: Տեսաձայնագրում կարող են իրականացնել նաև վստահված անձինք, դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով»:

Հոդված 4. Օրենսգրքի 13-րդ հոդվածում.

ա) 1-ին կետի 2-րդ պարբերությունը հանել,

բ) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 և 1.2 կետերով. «1.1. Ընտրողների կողմից ստորագրված ցուցակները հրապարակվում են: Տեղամասում քվեարկած ընտրողների ցուցակները (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակները) պատճենահանվում են և փակցվում ընտրական տեղամասում՝ տվյալ տեղամասում ընտրությունների արդյունքների ամփոփման պահից առավելագույնը 2 ժամվա ընթացքում»:

Հոդված 7. Օրենսգրքի 33-րդ հոդվածի 9-րդ կետի առաջին նախադասությունից հետո ավելացնել հետևյալ նախադասությունները. «Քվեարկության գործընթացում խախտումներ նկատելու և հայտնաբերելու դեպքում հանձնաժողովի անդամները պարտավոր են արձանագրել դրանք: Ընդ որում, եթե հանձնաժողովի որևէ անդամ այն արձանագրում է, արդա հանձնաժողովի մյուս անդամները կամ պետք է ստորագրեն այն, կամ հրաժարվելու դեպքում՝ գրավոր ներկայացնեն չստորագրելու պատճառները ու հիմնավորումները»:

Հոդված 8. Օրենսգրքի 18-րդ հոդվածում.

ա) 3-րդ կետից հետո ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն. «ՀՌԱՀ-ը պարտավոր է նախընտրական քարոզչությունից առաջ հրապարակել ռադիոհեռուստատեսության մոնիթորինգի և վերահսկողության մեթոդիկան»:

բ) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Նախընտրական քարոզչության ժամանակ թեկնածուներին, կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին), ինչպես նաև նրանց կամ նրանց անդամների կողմից ղեկավարվող իրավաբանական անձանց և նրանց ներկայացուցիչներին արգելվում է անձամբ կամ իրենց անունից կամ որևէ այլ եղանակով քաղաքացիներին,



համայնքներին, բոլոր տեսակի կազմակերպություններին և նրանց աշխատակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ կամ խոստանալ դրամ, սննդամթերք, արժեթղթեր, արտոնություններ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Ընտրության նախորդող երեք օրերին և ընտրության օրը արգելվում է ցանկացած բարեգործական միջոցառման իրականացում»:

գ) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 7^1 կետով. «7^1. Արգելվում է թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գույքի, տրանսպորտային և այլ միջոցների օգտագործումը»:

Հոդված 12. Օրենսգրքի 35-րդ հոդվածում.

ա) 1-ին կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմավորվում է Ազգային ժողովում խմբակցություն ունեցող յուրաքանչյուր կուսակցության մշտապես գործող մարմնի որոշմամբ, իսկ դաշինքի դեպքում՝ դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների համատեղ՝ ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ նշանակված անդամներից, թվով 8 հոգուց, 5 տարի ժամկետով: Ընդ որում ԱԺ ընդդիմադիր կուսակցությունները նշանակում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 8 անդամներից 4-ին, իսկ իշխանության մաս կազմող կուսակցությունները՝ մյուս 4-ին: Նշված չորսական տեղերը բաշխվում են ԱԺ ընդդիմադիր և իշխանական կուսակցությունների միջև համամասնորեն: Եթե ԱԺ ընդդիմադիր/իշխանական խմբակցությունները 4-ից ավելի են, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մեկական անդամ են նշանակում նրանցից առավել տեղեր ունեցողները, եթե դրանք երեքն են, ապա յուրաքանչյուրի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մեկական անդամ նշանակելուց հետո մնացած մեկ տեղի վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ է նշանակում նրանցից ԱԺ-ում առավելագույն տեղեր ունեցող կուսակցությունը, եթե դրանք երկուսն են, ապա յուրաքանչյուրը նշանակում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի երկուական անդամ, իսկ եթե մեկն է՝ նշանակում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 4 անդամներին: Նշված կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմինները իրավունք ունեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրենց նշանակած անդամին (անդամներին) ետ կանչելու և նրա փոխարեն մեկ այլ անդամ նշանակելու»:

Հոդված 19. Օրենսգրքի 49.2-րդ հոդվածում.

ա) 7-րդ կետի առաջին նախադասությունից հետո ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Քվեատուփի վրա ամրացվում է հատուկ էլեկտրոնային հաշվիչ սարք, որը ֆիքսում է յուրաքանչյուր քվեածրարի մուտքը քվեատուփ և իր վահանակի վրա ցույց է տալիս յուրաքանչյուր պահին քվեատուփում առկա քվեածրարների քվանակը»:

բ) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետով. «Տեղամասային ընտրական հանձնաժողովը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով սքանավորում և արխիվացնում է յուրաքանչյուր ընտրողի անձնագիրը»:

Հոդված 22. Օրենսգրքի 61-րդ հոդվածի 8-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով. «Հանձնաժողովի անդամները, վստահված անձինք և դիտորդները պարտավոր են ստանալ արձանագրությունների քաղվածքները: Նշված գործողությունը արձանագրվում է գործավարության մասյանում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով»:

Հոդված 31. Օրենսգրքի 100-րդ հոդվածում.

բ) 2-րդ կետի 3-րդ նախադասության «ընտրական ցուցակի առնվազն 20 տոկոսը պետք է լինեն կանայք, ընդ որում, ընտրական ցուցակի առնվազն յուրաքանչյուր տասներորդը պետք է լինի կին» հատվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ընտրական ցուցակի առնվազն 30 տոկոսը պետք է լինեն կանայք, ընդ որում, ընտրական ցուցակի առնվազն յուրաքանչյուր չորրորդը պետք է լինի կին», որից անմիջապես հետո ավելացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Ազգային ժողովի ընտրված կին պատգամավորի կողմից մանդատը վայր դնելու դեպքում նրա փոխարեն մանդատը ստանձնում է ցուցակում հաջորդ կին թեկնածուն, իսկ այդպիսինի բացակայության դեպքում՝ հաջորդ տղամարդ թեկնածուն»:

1921 թ. Փետրվարյան ապստամբության բնույթի և շարժիչ ուժերի հարցերը հայ պատմագրության մեջ

(90-ամյակի առթիվ)

Արարատ Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Դասական քաղաքագիտությունը ուսուցանում է, որ յուրաքանչյուր հեղափոխության, սոցիալական ապստամբության կամ հեղաշրջման նպատակը իշխանության գրավումն է: Դրանց թվին կարելի է դասել նաև 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը, մի իրադարձություն, որն հայ պատմագրության վիճահարույց հիմնահարցերից է: Պատմագիտական և հուշագրական գրականության մեջ տվյալ իրադարձությունն անվանվել է տարբեր կերպ՝ ապըստամբություն, խռովություն, հեղաշրջում, արկածախնդրություն և այլն: Սակայն այդ որակումներից կատարվածի էությունը չի փոխվում: Պատմական իրողությունն այն է, որ հասարակության սոցիալական տարբեր շերտերի ու խմբերի մի զգալի հատված, այլևս չտանելով բոլշևիկյան իշխանության վարած բռնությունների քաղաքականությունը, ՀՅԴ կուսակցության ղեկավարությամբ դիմել է զինված ելույթի, տապալել է խորհրդային իշխանությունը մայրաքաղաք Երևանում և հանրապետության առնվազն չորս գավառում և շուրջ ամիսուկես իշխանությունը պահել իր ձեռքում:

Փետրվարյան ապստամբությունը՝ իբրև քաղաքացիական պատերազմի (կռիվների) դրսևորում, մեր կարծիքով, չի կարելի նույնացնել Ռուսաստանի կամ արևմտաեվրոպական մի շարք երկրների դասական դարձած քաղաքացիական կռիվների հետ: Հայաստանում տեղի ունեցածը զինված պայքար էր ոչ այնքան տարբեր դասակարգերի՝ մի կողմից կալվածատերերի և չքավոր գյուղացիների կամ բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև (իրականում Հայաստանում չեն եղել ընդգծված դասակարգեր՝ կալվածատերեր, բուրժուազիա, պրոլետարիատ և այլն), որքան Հայաստանի երկու գլխավոր քաղաքական անհաշտ ուժերի՝ ՀՅԴ և բոլշևիկների միջև՝ քաղաքական իշխանության համար: Սրանց միջև պայքարի գերխնդիրը եղել է այն, թե Հայաստանը, իրո՞ք, պետք է լինի անկախ, եվրոպական չափանիշներին ձգտող ժողովրդավարական երկիր, թե՞ Խորհրդային Ռուսաստանից քաղաքականապես կախյալ, մարքս-լենինյան գաղափարաքաղաքական հիմունքներով կառուցվող ամբողջատիրական պետություն: Առաջին ուղղության կրողը համարվում էր ՀՅԴ-ն, իսկ երկրորդինը՝ Հայաստանի կոմկուսը: Այդ իմաստով փետրվարյան ապստամբությունը իր բնույթով և հետապնդած նպատակներով ոչ բուրժուական էր և ոչ էլ սոցիալիստական, այլ սոցիալական ինքնաբուխ ժողովրդավարական ելույթ էր բոլշևիկյան

1921թ. հրամանատարական կազմ, կենտրոնում՝ Կարո Սասունին

բռնությունների դեմ՝ հանուն մարդկանց իրավունքների ու արդարության, Հայաստանի ազատության և անկախության: Հենց այդ խնդիրներով էլ որոշվում է ապստամբության բնույթը:

Մեր կարծիքով, փետրվարյան իրադարձությունները որոշ վերապահությամբ կարելի է քաղաքացիական կռիվներ համարել, որովհետև այդ կռիվներում որոշիչ է եղել արտաքին գործոնի՝ Ռուսաստանի և ռուսական Կարմիր բանակի դերը:

Սակայն մինչ օրս հայ պատմագրության մեջ հստակ հայեցակետ չկա, թե իր բնույթով, խնդիրներով և ապստամբությանը մասնակից շարժիչ ուժերով իրականում ինչպիսին են եղել փետրվարյան իրադարձությունները: Եթե հնարավոր լինի պարզել իշխանափոխության համար պայքարի մեջ ներքաշված սոցիալական խմբերի ներգրավվածության չափը, ապա դրանով հնարավոր կլինի ամբողջական պատկերացում կազմել Փետրվարյան ապստամբության բնույթի, շարժիչ ուժերի, սոցիալական շերտերի մասնակցության աստիճանի և առհասարակ ապստամբության բովանդակության մասին:

Դրանով հնարավոր կլինի պատասխանել 90 տարի շարունակ հայ պատմագրության մեջ վիճարկվող այն հարցին, թե փետրվարյան իրադարձությունը «դաշնակ մաուզերիստ-խմբապետների դավադիր ավանտյուրա՞ էր», թե՞ «ինքնաբուխ ժողովրդական ապստամբություն»:

Մինչև այժմ խնդիրը նման ձևով չի քննվել ու վերլուծվել: Ավելի շատ եղել են քարոզչական, գաղափարախոսական բնույթի դատողություններ ու հայտարարություններ: Ապստամբությանը ճիշտ գնահատական տալու համար նախ պետք է ցույց տալ ու վերլուծել նրա բնույթը և շարժիչ ուժերը: Ինչ վերաբերում է պատճառների լուսաբանմանը, ապա հայ պատմագրության մեջ տարբեր մոտեցումներով խնդիրը բավականաչափ ներկայացվել է:

Ապստամբության բնույթը և շարժիչ ուժերը բացահայտելու համար հարկ է պարզել, թե պոտենցիալ առումով հասարակական որ շերտերը և խավերը կարող էին մասնակցություն ունենալ կամ, նվազագույնը, համակրել ու աջակցել շարժմանը և, ընդհակառակը, դեմ լինել ապստամբությանը, պայքարել նրա դեմ:

Մինչ օրս պատմագիտական գրականության մեջ փորձ չի արվել գոնե մոտավոր կերպով հաշվարկել և ցույց տալ, թե իրականում որքան են եղել սոցիալական այն խմբի ու խավերի մասնակիցնե-

Հովհաննես Թումանյան

րի թվաքանակը, ովքեր զենքը ձեռքին ակտիվ մասնակցել կամ այս կամ այն կերպ համակրել, օգնել ու աջակցել են շարժմանը: Եթե հնարավոր լինի մոտավոր կերպով պարզել դրանց թվաքանակը, ապա այստեղից էլ պարզ կդառնա, թե փետրվարյան իրադարձությունը մի նեղ խմբի արկածախնդրությո՞ւն էր, թե՞ ժողովրդական ապստամբություն:

Այսինքն՝ խնդիր է դրվում պարզելու ապստամբության շարժիչ ուժերը՝ ըստ սոցիալական խմբերի ու խավերի, և դրանց մասնակիցների ու հարողների մոտավոր թվաքանակը: Դա ցույց տալու համար հարկ է դիմել վիճակագրական տվյալների:

Հայտնի է, որ Հայաստանի Առաջին Հանրապետությունը 1920 թ. գարնանը իր առավելագույն սահմանների շրջանակներում ունեցել է 2 մլն.-ից ավելի բնակչություն: Արդեն 1920 թ. վերջին՝ Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո նրա տարածքների զգալի մասի բռնազավթման, ռազմակալման, բնակչության մի մասի արտագաղթի և այլ պատճառներով խորհրդահայ պատմագիտական գրականության մեջ ընդունված է խորհրդայնացված Հայաստանի բնակչության թիվը համարել 720 հազար մարդ[1]:

ՀՍԽՀ կենտրոնական վիճակագրական վարչության 1922 թ. անցկացրած գյուղատնտեսական վիճակագրության նյութերով հանրապետության ամբողջ բնակչությունը (քաղաքային և գյուղական) կազմել է 781011 մարդ (կլորացված՝ 780 հազար)[2]:

1. Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով, Ե., 1935, էջ VI, 2, Սովետական Հայաստանը 50 տարում (վիճակագրական նյութերի ժողովածու), Ե., 1970, էջ 5, Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920–1922 թթ.), Ե., 1987, էջ 259, և այլն:

2. Հայաստանի ազգաբնակչությունը ըստ սեռի, տարիքի, գրագիտության և ազգության (1922 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութեր, պրակ 2), Երևան, 1924, էջ 95 (այսուհետ՝ Հայաստանի ազգաբնակչությունը...):

1921թ. փետրվարի 18, ուսանողական խումբ

ՀՍԽՀ բնակչության 1921-1922 թթ. թվաքանակի մասին կան այլ տվյալներ: Օրինակ, Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը 1921 թ. հունիսին Մոսկվայում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանին տեղեկացնում է, որ Հայաստանի տարածքում կա 1,5 մլն. բնակիչ և, բացի այդ, մինչև 100 հազար անտեր որբ[3]: Մեկ այլ տվյալով՝ 1922 թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի հիմնական ազգաբնակչությունը կազմել է 1,1 մլն. մարդ, իսկ գաղթականությունը՝ 300 հազար: Ամբողջ բնակչությունը կազմել է 1,4 մլն. մարդ[4]: Մեր կարծիքով՝ այս երկու տվյալները մոտավոր հաշվարկի արդյունք են, չափազանցված են և այնքան էլ վստահություն չեն ներշնչում: Օրինակ, խիստ կասկածելի է, թե 1922 թ. սկզբին հանրապետությունում 300 հազար գաղթական եղած լիներ: Այս կապակցությամբ ավելի մոտ է իրականությանը 200 հազար գաղթական ցուցանիշը[5]:

Հասկանալի է, որ ավելի վստահելի են 1922 թ. գյուղատնտեսական վիճակագրության տվյալները: Այդ իսկ պատճառով Փետրվարյան ապստամբության թվաքանակը, սոցիալական կազմը, սեռատարիքային, ազգային և այլ հատկանիշներ (ցուցանիշներ) հաշվառելիս հիմք ենք ընդունել հենց այդ վիճակագրության տվյալները, որը ժամանակային առումով ամենից ավելի մոտ է 1921 թ. փետրվարյան իրադարձությունների ժամանակաշրջանին: Հավանաբար վիճակագրական այդ հաշվառման արդյունքները հիմք համարելով՝ պատմաբան Վ. Ղազախեցյանը նույնպես 1922 թ. Հայաստանի բնակչության ընդհանուր թիվը նշում է 780 հազար մարդ[6]:

1921 թ. հուլիսի 20-ի ՀՍԽՀ ժողկոմսովետի վարչական բաժանման մասին դեկրետով հանրապետությունում հիմնվեցին 8 գավառ՝ Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Լոռիի, Իջևանի, Նոր Բայազետի և Դարալագյազի: Շուտով՝ Զանգեզուրի միացումով գավառների թիվը հասավ 9-ի[7]:

Փոքր-ինչ ավելի ուշ, ըստ 1922 թ. անցկացված գյուղատնտեսական վիճակագրական տվյալների, վարչատարածքային առումով հանրապետությունը բաժանված է եղել 10 գավառների: Դրանք էին՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Դիլիջանի, Լոռիի, Ղարաքիլիսայի, Դարալագյազի, Զանգեզուրի և Մեղրիի[8]:

1921 թ. սկզբի դրությամբ, այսինքն՝ փետրվարյան իրադարձությունների փուլում, ապստամբության մեջ անմիջականորեն ներգրավված են եղել հիմնականում չորս՝ Երևանի, Էջմիածնի, Նոր Բայազետի և Դարալագյազի գավառները:

Հարկ է փաստել, որ, իրոք, ապստամբության օջախները և հենակետային վայրերը համարվել են Երևանը, Արարատյան դաշտը, Կոտայքը, Արագածոտնը, Դարալագյազը և այլն: Հանրապետության ազատաբաղձ երկրամասերից էր նաև Սյունիքը, որը Գ. Նժդեհի գլխավորությամբ պայքարում էր թուրք-թաթար-բոլշևիկ ոտնձգությունների դեմ իր ինքնիշխանության համար: Փորձը ցույց է տալիս, որ ինչպես Առաջին Հանրապետության ժամանակ, այնպես էլ Փետրվարյան ապստամբության շրջանում Հայաստանի ազատության ու անկախության համար պայքարողը, ուժն ու հենարանը եղել է Արարատյան դաշտի հայությունը: Պատահական չէ, որ 1918-1920 թթ. հանրապետությունը երբեմն կոչել են նաև Արարատյան Հանրապետություն:

Վերոնշյալ չորս գավառներից զատ, գյուղատնտեսական մարդահամարում ներառված մնացած վեց գավառները՝ Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Լոռիի, Դիլիջանի, Զանգեզուրի և Մեղրիի, չենք հաշվառել, որովհետև 1921 թ. փետրվար-մարտ ամիսների դրությամբ Ալեքսանդրապոլի գավառը գտնվում էր թուրքական ռազմակալության տակ, Դիլիջան-Ղարաքիլիսան՝ բոլշևիկների հսկողության ներքո, ուր ստեղծվել էր հյուսիսային

3. Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 114, ց. 1, գ. 245, թ. 1:
4. ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 96, մաս II, թ. 41:
5. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍԽՀ ԳԱ հրատ., հ. 7, Ե., 1967, էջ 169, Հայաստանի կոմկուսի պատմության ուրվագծեր, Ե., 1967, էջ 312:
6. Ղազախեցյան Վ. Ն.,Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006, էջ 264:
7. Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. 7, Ե., 1967, էջ 181:
8. «Հայաստանի ազգաբնակչությունը...», էջ 92–95:

Զահանգիր աղա

շրջանների հեղկոմ՝ չեկիստ Գ. Աթարբեկյանի ղեկավարությամբ: Նույն կերպ Լոռվա «Չեզոք գոտին» նոր էր ազատագրվել մենշևիկյան Վրաստանի տիրապետությունից և գտնվում էր Կարմիր բանակի հսկողության տակ: Ինչ վերաբերում է Զանգեզուրին և նրա օրգանական մասը կազմող Մեղրիին, ապա դրանք գտնվում էին ինքնավար Սյունիքի կազմում և Արարատյան Հայաստանի ապըստամբությանը անմիջական մասնակցություն չեն ունեցել:

Եթե ասվում է, որ ապստամբության փուլում խորհրդային իշխանությունը պահպանվել էր Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Իջևանի, Շամշադինի և վրաց տիրապետությունից նոր ազատագրված Լոռիում, ապա դա ամենևին չի նշանակում, թե նշված շրջաններում չի եղել դժգոհություն և ընդվզում: Օրինակ, Հայաստանի հյուսիսային շրջաններում, ուր փետրվարի 26-ից հաստատվել էր մի նոր Հայհեղկոմ՝ չեկիստ Գ. Աթարբեկյանի գլխավորությամբ, վերջինս տեղերում ծագած ամեն մի ընդվզում կամ ելույթ իսկույն խեղդում էր արյան մեջ, գնդակահարում գերիներին: Այս առնչությամբ, օրինակ, տեղերից Բաքու հասած լուրերի հիման վրա Անդրկովկասի փաստական ղեկավար Գ. Օրջոնիկիձեն մարտի 18-ին Բաքվից հեռագրով կըշտամբում էր Գ. Աթարբեկյանին ու պահանջում վերջ տալ տեռորին: Վերջում նա խնդրում էր հաղորդել, թե որքան մարդ է գնդակահարել[9]:

Ըստ 1922 թ. գյուղատնտեսական վիճակագրության՝ ապստամբությանը մասնակցած սոցիալական խմբերի պատկերը պարզելու համար նախ անհրաժեշտ է ներկայացնել բնակչության ազգային կազմը: Ակներև է, որ Փետրվարյան ապստամբությանը մասնակից հիմնական տարրը կազմել են հայերը: Ապստամբական չորս (Երևանի, Էջմիածնի, Նոր Բայազետի և Դարալագյազի) գավառների հայերի ընդհանուր թվաքանակը կազմել է.

Երևանի գավ.՝ 118590 մարդ (60120 ար. և 58470 իգ.)
Էջմիածնի գավ.՝ 88720 մարդ (44897 ար. և 43823 իգ.)
Նոր Բայազետի գավ.՝ 76615 մարդ (38534 ար. և 38081 իգ.)
Դարալագյազի գավ.՝ 21572 մարդ (11351 ար. և 10221 իգ.)

Ընդամենը՝ 305497 մարդ (154902 ար. և 150595 իգ.)[10]

Նշված գավառների հայ բնակչության թվակազմում ներառվել են հավասարապես թե քաղաքային և թե գյուղական բնակչությունը, որովհետև փետրվարյան շարժմանը հավասարապես մասնակցել են թե քաղաքաբնակները և թե գյուղաբնակները: Փաստերը ցույց են տալիս, որ գյուղացիները ևս ցուցաբերել են ակտիվ մասնակցություն, որովհետև ռազմակոմունիստական տարատեսակ բռնագրավումների գլխավոր թիրախներից էր նաև գյուղացիությունը:

Վիճակագրական հաշվառումների ժամանակ ընդունված է բնակչությանը բաժանել սոցիալական տարբեր խմբերի ու շերտերի. օրինակ, գյուղաբնակները՝ մենատնտես ունևորների, միջակների, ինչպես նաև չքավորների, քաղաքաբնակները՝ քաղքենիների, ծառայողների, բանվորների, արհեստավորների, առևտրականների և այլն:

Այդ առումով ապստամբությանը մասնակից ուժերը ցույց տալու համար հարկ է պարզել, թե պոտենցիալ առումով հասարակական որ շերտերը և խավերը կարող էին մասնակցել կամ նվազագույնը համակրել ու աջակցել փետրվարյան շարժմանը:

Տարիքային տեսակետից, որպես կանոն, բնակչության քաղաքականապես ակտիվ ու գործունյա մասը կազմում էին հիմնականում 16-ից 60 տարեկան տղամարդիկ:

ՀՍԽՀ բնակչության 1926, 1939 և 1959 թվական-

9. Геноцид армян (документы и комментарий), сост. проф. Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, с. 466 (այսուհետ՝ Геноцид армян...).
10. «Հայաստանի ազգաբնակչությունը...», էջ 92–95:

ների համամիութենական մարդահամարների տարիքային համամասնության տվյալները համադրելիս պարզվում է, որ բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ 0-ից 9 և 10-15 տարեկանները, այսինքն՝ 0-ից մինչև 15 տարեկանները ներառյալ (այսինքն՝ ոչ չափահաս տարիք ունեցողները) միջին հաշվով կազմում են ամբողջ բնակչության բոլոր տարիքային խմբերի ընդհանուր թվաքանակի մեկ երրորդից քիչ ավելի[11]: Այդ նշանակում է, որ բնակչության տարիքային խմբերի մյուս հատվածը, որը կազմում է ընդհանուրի մոտ երկու երրորդը կամ 65 %-ը, համարվում է բնակչության առավել ակտիվ մասը թե աշխատանքային, թե տնտեսական և թե քաղաքական առումներով:

Եթե առաջնորդվում ենք այդ չափանիշով, ապա տեսնում ենք, որ ուսումնասիրված չորս գավառների հայ արական բնակչության (154902 մարդ) մեկ երրորդից քիչ ավելին (55 հազարը) ոչ չափահաս (0-ից մինչև 15 տարեկան) տարիքի տղապատանիներ են, ապա ստացվում է, որ հայ ազգաբնակչության ակտիվ մասը (16-ից մինչև 60 տարեկան) կազմել է մոտ 100 հազար մարդ: Իհարկե, եղել են նաև 60 տարեկանից բարձր հասակ ունեցողներ, սակայն դրանք կազմել են շատ փոքր տոկոս:

Մյուս կողմից հայտնի է, որ Հայաստանի գյուղական բնակչությունը (իսկ հանրապետության բնակչության մոտ 90 տոկոսը կազմել են գյուղաբնակները), ըստ սոցիալ-ունեցվածքային կազմի, 1920-ական թվականների սկզբի դրությամբ տոկոսային համամասնությամբ ունեցել է մոտավորապես հետևյալ պատկերը. ունևորներ՝ մինչև 5 տոկոս, միջակներ՝ 30 տոկոս, և չքավորներ՝ 60 տոկոսից ավելի: Սոցիալ-ունեցվածքային առումով կարելի է ասել, որ գրեթե նույն պատկերն է եղել նաև քաղաքներում:

Այս համամասնությամբ կարելի է եզրակացնել, որ Հայաստանի ապստամբական չորս գավառների շուրջ 100 հազար ակտիվ հայ բնակչության 35 տոկոսը (5 տոկոս ունևոր և 30 տոկոս միջակ), այսինքն՝ քանակական արտահայտությամբ 35 հազար մարդ ունեցել է որոշակի սեփականություն, ենթարկվել է ռազմակոմունիստական բռնագրավումների ու ճնշումների, ուստի և պոտենցիալ առումով կարող էր մասնակցել կամ համակրել ապստամբությանը: Բացի ունևոր և միջակ շերտերից, ի դեպ, արձանագրվել են նաև բազում փաստեր, երբ կամայականորեն բռնագրավել են անգամ չքավորների վերջին միջոցը:

1921թ. փետրվարի 18, մասնակիցներ

Մեր կողմից արված մոտավոր հաշվարկը, ինչպես նաև ռազմական գործողությունների մասնակիցների մասին փաստական տվյալները ցույց են տալիս, որ ուսումնասիրված 4 գավառների հայ ակտիվ բնակչության մի հատված, մոտ 15 հազար մարդ, զենքը ձեռքին մասնակցել է ապստամբական ու ռազմական գործողություններին:

Ասվածը հիմնավորելու համար բերենք հետևյալ փաստերն ու փաստարկները: 11-րդ Կարմիր բանակի հայկական առանձին հրաձգային գնդի հրամանատար գնդ. Արմենակ Բաղդասարյանն իր ռազմական հուշերում տեղեկացնում է, որ փետրվարի 20-24-ի դրությամբ ապստամբների զինված ուժերը կազմել են շուրջ 7000 մարդ (6000 հետևակ և 1000 հեծյալ)[12]: Եթե նկատի ունենանք, որ Կարմիր բանակին դիմագրավելու նպատակով հետագա օրերին և մարտ ամսին երեք ճակատներում կռվող ապստամբների շարքերը շարունակաբար համալրվել են ժողովրդական կամավորներով, իսկ մարտի 15-ին հայտարարվել է 20-ից մինչև 32 տարեկան քաղաքացիների պարտադիր զորակոչ[13], ապա կարելի է ասել, որ ՀՓԿ աշխարհազորային բանակի ընդհանուր թիվը առնվազն կրկնապատկվել է՝ հասնելով շուրջ 15 հազարի: Փաստերը ցույց են տալիս, որ ճակատ մեկնել ցանկացողների թիվը եղել է շատ ավելի, քան հնարավոր է եղել նրանց ապահովել զենքով: Մարտի կեսերին զգացվել է զենքի ու զինամթերքի սղություն: Դրա համար ՀՓԿ-ն դիմել է բնակչությանը՝ ստացականով և հե-

11 Итоги Всесоюзной переписи населения 1959 года (Армянская ССР), М., 1963, с. 11—25.
12. Բաղդասարյան Ա., Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, Ե., 1931, էջ 54:
13. ՀԱԱ, ֆ. 38, ց. 1, գ. 26, թ. 2, «Ազատ Հայաստան», 16 մարտի 1921 թ.:

տագայում վերադարձնելու պայմանով իշխանություններին հանձնել իրենց ձեռքի տակ եղած զենքն ու զինամթերքը: Ս. Վրացյանը վկայում է, ու մարտի 16-17-ին ՀՅԴ ԿԿ-ի նախաձեռնությամբ քաղաքում տեղի ունեցավ զենքի ու փամփուշտի հավաքում[14]: ՀՓԿ-ի պաշտոնաթերթ «Ազատ Հայաստան»-ի էջերը ողողված են ժողովրդից զենք հավաքելու և անզեն կամավորներին զինելու բազում փաստերով[15]: Բերվածը բավարար հիմք է տալիս պնդելու, որ ապստամբների շարքերում զենքը ձեռքին կռվել են մոտ 15 հազար մարդ: Իսկ մոտ 10 հազար մարդ էլ, ըստ երևույթին, համակրել, օգնել, աջակցել է ապստամբներին, սակայն անմիջական զինված մասնակցություն հանդես չի բերել:

Այսպիսով, մոտավոր հաշվարկներով ստացվում է, որ Փետրվարյան ապստամբությանը անմիջական մասնակից՝ զենքով, ինչպես նաև համակիր, աջակից հայերի թիվը կազմել է ավելի քան 25 հազար մարդ կամ նշված գավառների հայ ակտիվ հասակի բնակչության 25 տոկոսը:

Այս հաշվարկները կատարելիս, սակայն, մի կարևոր հանգամանք հաշվի չենք առել: Բանն այն է, որ հնարավոր չի եղել կոնկրետ թվերով ցույց տալ Հայաստանում ապաստանած և բոլոր տարիքի շուրջ 200 հազարի հասնող արևմտահայ գաղթականության մասնակցության չափը: Սակայն հայտնի է, որ հակախորհրդային պայքարի գլխավոր շարժիչ ուժը կազմել են արևմտահայ հայդուկները, որոնց թիվը հասնում էր մի քանի հազարի: Արևմտահայ 200 հազար գաղթականների շուրջ կեսը գտնվել են վերոնշյալ ապստամբական չորս գավառներում, իսկ ամբողջ գաղթականության թվաքանակում 40-50 հազարը կազմել են որբեր: Բացի այդ, ապստամբության մասնակիցների թվաքանակում առհասարակ չենք ներառել կանանց, որոնց մասնակցության դրսևորումներ նույնպես եղել են:

Ինչ վերաբերում է Հայաստանի էթնիկ փոքրամասնության խնդրին, ապա պետք է ասել, որ եզդիները, որոնց թիվը կազմել է մոտ 8 հազար մարդ, որից բոլոր տարիքի՝ 3,9 հազարը արական սեռի[16], հիմնականում աջակցել են ապստամբներին: Նրանց հեծյալ ջոկատը Զահանգիր աղայի հրամանատարությամբ գտնվել է ապստամբների կողքին ու կռվել կարմիրների դեմ[17]:

Հանրապետությունում իրենց թվաքանակով երկրորդը համարվող թուրք- թաթարները (ընդամենը 76,5 հազար, որից բոլոր տարիքի՝ 40 հազարը արական սեռի)[18] հիմնականում ցուցաբերել են լոյալ կամ չեզոք դիրք: Փաստերը ցույց են տալիս, որ բռնագրավումների քաղաքականությունից տուժել են նաև Հայաստանի թուրքերը, որոնք, ի դեպ, եղել են հայերից ավելի ունևոր: Հետաքրքրական է, որ Երևանի ու Արարատյան դաշտի թրքությունը ապստամբության խնդրում հաճախ ցուցաբերել է լոյալ դիրք և այդ գործում զգալի է եղել Հայաստանում Թուրքիայի ներկայացուցիչ կապիտան Ք. Բահաէդդին բեյի խաղացած ակտիվ «հակաբոլշևիկյան» դերը:

Հարց է ծագում. ուղղակի կամ անուղղակի կերպով էլ ի՞նչ սոցիալական խմբեր կարող էին մասնակցություն բերել ապստամբությանը: Օրինակ, կասկած չկա, որ դրան կարող էին հարել 1921 թ. հունվարին Հայաստանից աքսորված նախկին բանակի շուրջ 1400 սպաների և զինվորների հարազատները, որովհետև հասկանալի պատճառով սպաների աքսորը մեծ ատելություն էր առաջացրել նրանց հարազատ-բարեկամների մոտ, ուստի նրանք պատրաստ էին ըմբոստանալու և հակախորհրդային շարժմանը մասնակցություն ցույց տալու:

Ապստամբության շարքերը համալրող սոցիալական խավերից մեկը պետք է համարել նաև նախկին պետական պաշտոնյաներին, ովքեր Հայաստանի խորհրդայնացումից հետո զանգվածաբար պաշտոնազրկվեցին: Հայտնի է, որ Ներքին գործերի ժողկոմատի 1920 թ. դեկտեմբերի 13-ի հրամանով վերացվեցին դաշնակցական կառավարության օրոք գոյություն ունեցող վարչական հիմնարկություններն ու պաշտոնները՝ «նահանգապետությունները, քաղաքային ինքնավարությունները, գավառային կոմիսարները, Ն. Գ. նախարարության արտակարգ լիազորները, միլիցիայի տեսուչները, նահանգական ատյանները, հանրապետության միլիցիայի պահեստազորը՝ բոլոր նրանց մոտ գտնված գրասենյակներով և հաստիքներով»[19]: Այդ նշանակում է, որ հակախորհրդային ապստամբության համար կարող էին սոցիալական

14...Վրացեան Ս.,Կեանքի ուղիներով, հ. Զ, Բէյրութ, 1967, էջ 88:
15. «Ազատ Հայաստան», 4 մարտի, 16 մարտի, 29 մարտի 1921 թ.:
16. «Հայաստանի ազգաբնակչությունը...», էջ 94:
17. ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 38:
18. «Հայաստանի ազգաբնակչությունը...», էջ 94:
19. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Ե., 1960, էջ 425:

հենարան ծառայել փաստորեն նախկին պետական ապարատի ծառայողները, որոնց քանակը Առաջին Հանրապետության օրոք (1920 թ. սկզբներին) կազմել է շուրջ 16 000 մարդ[20]: Քաղաքական անվստահության և այլ պատճառներով դրանց ճնշող մեծամասնությունը աշխատանքից ազատվեց: Կարելի է ասել, որ խորհրդային իշխանությունից դժգոհ պաշտոնանկ այդ տարրը կազմել է շուրջ 10 հազ. մարդ, որն ավել կամ պակաս ձևով ներգրավված է եղել հակախորհրդային շարժման մեջ:

Ապստամբության մասնակիցների չափերի ու ակտիվության մասին վկայում է նաև այն հանգամանքը, որ հակախորհրդային շարժմանը մասնակցություն են ցուցաբերել կամ համակրել են անխտիր բոլոր կուսակցությունները (բացառությամբ, իհարկե, բոլշևիկների), մտավորականության զգալի մասը և այլն: Հայաստանում լեգալ կամ կիսալեգալ գործող ՀՅԴ, ՀԺԿ, Ս. Դ. Հնչակյան, Հայ Ս. Ռամկավար, էսէռական, ՀՍԴԲ կուսակցությունները միասնական կերպով կանգնեցին ապստամբների դիրքերում: Ապստամբության ղեկավարությունը ստանձնել էր ՀՅԴ-ն: Բոլշևիզմին ընդդիմադիր կուսակցություններից ՀԺԿ-ն, էսէռները, ռամկավարները նույնիսկ ջոկատներ ստեղծեցին, զբաղված էին ինքնապաշտպանության կազմակերպմամբ, դրամի հանգանակությամբ, ժողովրդական զինուժի համար պարեն հայթայթելով, ժողովրդի եռանդը վառ պահելով և այլ աշխատանքներով: Այդ նպատակով էր, որ հանրապետության ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներից ստեղծվեց Միջկուսակցական մարմին (խորհուրդ), որի նախագահն էր սոցիալ-դեմոկրատ Բախշի Իշխանյանը, իսկ քարտուղարը՝ հնչակյան Լազոն[21]:

Հարց է ծագում. ինչո՞ւ բոլոր կուսակցությունները միահամուռ կանգնեցին ապստամբների շարքերում: Հավանաբար բոլշևիկների վարած ատելի քաղաքականությունն էր միավորել նրանց: Ս. Վրացյանը վկայում է, որ անգամ Առաջին Հանրապետության օրոք նման բան չէր եղել[22]: Դրա պատճառը պետք է փնտրել բոլշևիկների վարած մի քանի ամսվա հիասթափեցնող քաղաքականության մեջ: Ամենից առաջ նրանք անտեսեցին և ոտնատակ տվեցին Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրի գրեթե բոլոր կետերը, մասնավորապես՝ այլ կուսակցությունների հանդեպ հանդուրժողական լինելու, չհետապնդելու, Հայաստանի անկախությունը պահպանելու, 1914 թ. պետական սահմանը վերականգնելու և այլ կետեր: Սակայն կուսակցությունները տեսնում էին, որ ոչ միայն

տնտեսական, այլև քաղաքական առումներով ոչ մի դրական տեղաշարժ չէր նշմարվում: Ավելին, բոլշևիկները ցույց էին տալիս, որ իրենք թուրքերի դաշնակիցներն են: Իրենց հերթին թուրքերը քաղաքական ճնշում էին գործադրում Հայհեղկոմի վրա՝ Դրոյին աքսորելու, բանակը կազմալուծելու, դաշնակցական առանձին գործիչների իշխանության մարմիններից հեռացնելու և այլն: Նման պայմաններում, հասկանալի է, որ բոլշևիկներին ընդդիմադիր կուսակցությունները պետք է ըմբոստանային նրանց վարչակարգի դեմ:

Բացի ընդդիմադիր կուսակցություններից, ապստամբության ընթացքում առավել մեծ դերակատարություն են ունեցել հայրենակցական միությունները, որոնք արտահայտում էին արևմտահայ գաղթականության տրամադրությունները և ձգտումները: Վասպուրականցիների, սասունցիների, տարոնցիների, խնուսցիների և այլ հայրենակցական միություններն ունեին իրենց կամավորական խմբերը, որոնք և կազմում էին ապստամբների զինուժի միջուկը:

Եվ վերջապես, ապստամբությանը համակիր ու աջակից ուժերի թվին պետք է դասել Հայոց եկեղեցին ու ամբողջ հոգևորական դասը: Այդ դժգոհությունն ուներ և տնտեսական, և գաղափարաքաղաքական, և հոգևոր-արժեքային պատճառ: Բացի այն, որ Մայր աթոռ Ս. Էջմիածնի կալվածքները, կուլտուր-կրթական հիմնարկությունները Հայհեղկոմի առանձին դեկրետներով պետականացման ենթակա համարվեցին, արգելվեց եկեղեցականնե-

20. Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918–1920 թթ.), Ե., 2005, էջ 240:
21. ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 13, թ. 21:
22. Վրացեան Ս.,Կեանքի ուղիներով, հ. Զ, Բէյրութ,1967, էջ 35:

ին զբաղվել ուսուցչությամբ, սկսվեցին նաև գաղափարաքաղաքական, աթեիստական հալածանքներ եկեղեցական կառույցի ու հոգևորականության դեմ:

Այսպիսով, անվիճելի է, որ Փետրվարյան ապըստամբությունն իր մեջ ներառել է ժողովրդական լայն զանգվածներ: Մեր մոտավոր հաշվարկներով Փետրվարյան ապստամբությանը՝ որպես շարժիչ ուժ, ուղղակի կամ անուղղակի կերպով, զենքը ձեռքին, նյութական ու բարոյական աջակցությամբ, մասնակցել կամ համակրանքով է վերաբերվել շուրջ 100 հազար մարդ, որոնցից 15 հազարը, փաստորեն, զենքը ձեռքին կռվել է բոլշևիկյան բռնավարչակարգի դեմ: Կարծում ենք՝ 100 հազար անմիջական մասնակից, համակիր ու լոյալ ապըստամբ ունեցող շարժումը չի կարելի որակել ավանտյուրա, ինչպես որ տասնամյակներ շարունակ արմատացած է եղել խորհրդահայ պատմագրության մեջ:

Կնշանակի՝ հիմնազուրկ է խորհրդահայ պատմագրության մեջ արմատացած այն թյուր տեսակետը, որ, իբր, Փետրվարյան խռովությունը չի ունեցել սոցիալական հենարան, որ դա, իբր, մի խումբ դաշնակ բախտախնդիր մաուզերիստների արկածախնդրություն էր՝ իշխանությունը բռնազավթելու համար:

Որ ապստամբությունը զանգվածային չափեր է ընդունել, այդ մասին փաստել է 1921 թ. մարտի 20-ին Թիֆլիսից Երևան ժամանած և անձամբ դիրքերում եղած ամենայն հայոց բանաստեղծ Հ. Թումանյանը: Ս. Վրացյանն իր հուշերում գրում է, որ Թումանյանի առաջին խոսքը Երևանում եղել է. «Ի՞նչ մաուզերիստներ, էս խում ամբողջ ազգն է ոտքի ելել»[23]:

Ապստամբության մասնակիցների թվաքանակի մասին անուղղակի կերպով կարելի է պատկերացում կազմել նաև ապստամբության պարտությունից հետո Երևանից դեպի Զանգեզուր նահանջող քաղաքացիների, մտավորականության և ապըստամբ զինվորների թվաքանակի, ինչպես նաև Արարատյան դաշտից Մարգարայի կամուրջով դեպի Թուրքիա անցնելու հույսով կուտակված բազմության տվյալներով:

Երևանից և հարևան շրջաններից դեպի Զանգեզուր գաղթողների թիվը, ըստ տարբեր հուշագիր հեղինակների, տատանվում է 10 հազարից մինչև 30 հազարի միջև[24]: Ստույգ թիվը կարելի է համարել 12-13 հազարը: Պատմաբան Ա. Սիմոնյանը, հենվելով Ե. Սարգիսյանի հուշերի տվյալների վրա, հայտնում է 8 հազար քաղաքացիական բնակչության և 5 հազարից ավելի զինվորականության մասին՝ ընդամենը 13 հազար մարդ[25]: Գ. Նժդեհի հաղորդած տվյալներով արարատյան գաղթականության ընդհանուր թիվը կազմել է մոտ 12 հազար մարդ[26]: Իսկ Ս. Վրացյանը հայտնում է, որ Երևանից ու Արարատյան դաշտից դեպի Զանգեզուր տեղահան է եղել ավելի քան 30 հազար բազմություն[27]:

Հայտնի է, որ Արարատյան դաշտից և Արագածոտնից արտագաղթողների մի հոսանք էլ ուղղվել է դեպի Մարգարայի կամուրջ՝ Թուրքիա անցնելու նպատակով: Ըստ Կ. Սասունու հաղորդած տվյալների՝ այդ փախստական բնակիչների քանակը կազմել է շուրջ 40 հազար[28]: Ստացվել է այնպես, որ Արաքսի ափին խռնված հայ բազմությունը նախընտրել է անցնել Թուրքիայի սահմանները, քան թե մնալ բոլշևիկների տիրապետության տակ:

Արդ, եթե երկու ուղղությամբ ընթացող այդ հոսքերի մարդկանց քանակը գումարենք, ապա կըստացվի, որ առնվազն 50-60 հազար մարդ այսպես թե այնպես ցանկացել է հեռանալ Հայաստանից: Դրանք հիմնականում եղել են ապստամբության մասնակիցները, ովքեր վախ են զգացել մասնակցությունից, ուստի, վախից դրդված, դիմել են փախուստի: Իսկ դրա կողքին դժվար է ցույց տալ, թե որքան մարդ էլ ապստամբության պարտությունից հետո, այս կամ այն կերպ, թաքնվել կամ ծպտվել է, մինչև որ խորհրդային իշխանությունը ներման որոշումներ կկայացներ:

Հետաքրքիր է պարզել նաև ապստամբությանը հակառակորդ սոցիալ-քաղաքական խմբերի ու շերտերի թվակազմը, որը ևս բավականաչափ հա-

23. Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Զ, Բէյրութ,1967, էջ 103:
24. Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Զ, Բէյրութ, 1967, էջ 139, Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958, էջ 562, Մինախորյան Վ., Ապրիլի 2-ի գաղթը, «Հայրենիք», 1923, թիվ 3 (դեկտեմբեր), էջ 89, «Վերջին լուր», Կ. Պոլիս, 4 հուլիսի 1921 թ., Աշխատունի Զ., Դրվագներ մեր ազատության պայքարից, «Հայրենիք», 1925, թիվ 10 (օգոստոս), էջ 113, Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն (հուշեր, 1890–1940), Ե., 2003, էջ 284, Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտերը (1919–1921), Ե., 2010, էջ 134:
25. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը, Ե., 2000, էջ 444:
26. Նժդեհ Գ., Երկեր, հ. 2, Ե., 2002, էջ 12:
27. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 598:
28. Սասունի Կ., Փետրվարյան ապստամբությունը, «Հայրենիք», 1926, թիվ 3 (հունվար), էջ 92:

սարակաշերտեր է ընդգրկել: Հասկանալի է, որ նշված չորս գավառների հայ ակտիվ հասակի (35 հազար մարդ) բնակչության մի հատված՝ բոլշևիկներ, կարմիրբանակայիններ, պետական ծառայողներ, առանձին մտավորականներ, բոլշևիկյան քարոզներով տարված չքավորներ և այլն՝ ավելի քան 10 հազարի չափ ակտիվ հասակի հայեր (կամ ընդհանուրի 10 տոկոսը), գտնվել են խորհրդային իշխանության ու Կարմիր բանակի դիրքերում և այսպես թե այնպես պայքարել են ապստամբների դեմ:

Եթե նշված 10 հազարին հավելենք հանրապետության Ալեքսանդրապոլի, Դիլիջանի, Լոռիի և Ղարաքիլիսայի գավառների հայ, ռուս և այլ ակտիվ բնակչության խորհրդամետ շերտերը, որոնք թվաքանակով շատ ավելի մեծ են եղել, քան ապըստամբությանը համակիր ուժերը, ապա կստացվի, որ Հայաստանում ապստամբությանը հակառակ կամ չկողմնորոշված զանգվածների ընդհանուր քանակը ևս կարող է կազմել պատկառելի թիվ: Եվ այս իմաստով չափազանցություն պետք է համարել պատմահուշագրական գրականության մեջ տեղ գտած այն տեսակետը, թե փետրվարյան ապստամբությունն ուներ համաժողովրդական բնույթ, «առանց դասերի և դասակարգերի խտրության ժողովուրդը մեկ մարդու պես կանգնած էր ՀՓԿ կողքին»[29]:

Փետրվարյան ապստամբությունը դժվար է միանշանակ համաժողովրդական համարել, որովհետև «ժողովուրդ» ասածը բազմաշերտ, բազմաշահ և երբեմն ամորֆ հասկացություն է: Անշուշտ, փետրվարյան իրադարձությունների ժամանակ եղել են հակառակորդներ, անորոշ, սպասողական վիճակում գտնվողներ, չկողմնորոշվածներ և այլն: Այնպես որ պատկերը հստակ չէ: Համառուսաստանյան Չեկայի լիազոր Գ. Աթարբեկյանը, Գ. Օրջոնիկիձեին ուղղված մարտի 9-ի նամակում խոսելով ապստամբության շարժիչ ուժերի մասին, նշում էր, որ «հասարակության մեջ կա ուժեղ շերտավորում»[30]:

Ապստամբության հակառակորդների շարքում կարող էին հայտնվել առաջին հերթին բոլշևիկյան քարոզներով տարված ընչազուրկ զանգվածները: Ինչպես արդեն ասվել է, հանրապետության բնակչության մեծամասնությունը՝ 60 տոկոսը, կազմել են չքավորները: Դրանք հիմնականում եղել են սեփականազուրկ, բռնագրավումների ենթակա գույք չունեցող աղքատ շերտեր: Հասկանալի է, որ ընչազուրկները բոլշևիկների ռազմակոմունիստական բռնագրավումների քաղաքականությունից դժգոհելու շատ պատճառ չունեին, որովհետև բռնագրավումների ենթակա առանձնապես գույք չեն ունեցել: Ընդհակառակը, սոցիալապես թշվառ այդ շերտերին կարող էին գրավել բոլշևիկյան քարոզկարգախոսները՝ սեփականատերերին սեփականազրկելու, հարուստների ունեցվածքը համաժողովրդական դարձնելու, հավասարություն հաստատելու և աշխատավորական արդար հասարակարգ կառուցելու մասին: Ակներև է, որ նման զանգվածները իրենց սոցիալ-տնտեսական վիճակի թելադրանքով առնվազն չէին կարող հարել ապստամբությանը:

Անշուշտ, եղել են խորհրդային իշխանությունը պաշտպանող սոցիալական (գիտակից թե անգիտակից) առանձին շերտեր՝ հատկապես պրոլետարացած զանգվածներ: Բայց, կարծում ենք, որ նրանք քանակով չեն եղել այնքան ստվար, որքան ապստամբության կողմնակից-համակիր շերտերն ու խմբերը, այլապես ապստամբությունը հնարավոր կլիներ ճնշել առանց դրսի՝ ռուսական Կարմիր բանակի օգնության:

Պատմաբան Վ. Ղազախեցյանը սխալ է համարում Փետրվարյան շարժումը **համաժողովրդական** համարելը, քանի որ, ըստ հեղինակի, բնակչության որոշ մասը պաշտպանում էր խորհրդային իշխանությունը, և բացի այդ, ապստամբությունը չէր ընդգրկել հանրապետության հյուսիսային շրջանները[31]:

Փետրվարյան իրադարձությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, իրոք, եղել են մեծամասամբ խորհրդային իշխանությունը պաշտպանող, ապստամբությանը հակառակորդ նույնիսկ առանձին շրջաններ ու քաղաքներ, որոնց ընդունված է անվանել **Կարմիր գոտիներ**: Այդպիսի շրջանների թվին են դասվում Քարվանսարան (Իջևանը), Ծամշադինը, Դիլիջանը, Ղարաքիլիսան, Նոր Բայազետը, Ելենովկան (Սևանը): Կարմիր գոտու մեջ պետք է ներառել նաև Ալեքսանդրապոլի գավառը, որը, սակայն, այդ ժամանակ գտնը-

29. Իրազեկ Յ., Մօտիկ անցեալից (պատմական դէպքեր և ապրումներ, 1917–1921), Պէյրութ, 1956, էջ 103, Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Զ, Բէյրութ, 1967, էջ 79, Աբրահամյան Մարտիրոս-Բաշգառնեցի, Իմ հիշելի հուշերը (Հայ դատի մատենաշար, թիվ 7, Թեհրան, 1978, էջ 5), Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 566 և ուրիշներ:
30. Геноцид армян, т. 2, ч. 1, М., 2003, с. 424.
31. Ղազախեցյան Վ. Ն., Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006, էջ 83:

LONDON, 26th February.
The Georgian delegation reports that a revolt in Armenia has overthrown the Soviet Government.

վում էր թուրքական ռազմակալության տակ:

Եթե հավատանք Գ. Աթարբեկյանի հաղորդած տեղեկությանը, ապա Դիլիջան-Ելենովկա ճակատում 70 տոկոսից ավելին հայ կամավոր գյուղացիներ էին[32]:

Ամենից առաջ ապստամբության թշնամիների շարքը պետք է դասել Հայաստանի բոլշևիկներին: 1921 թ. սկզբին Հայկոմկուսն (ՀԿ(բ)Կ) իր շարքերում ուներ 5300 անդամ և թեկնածու[33]: Այդ նշանակում է, որ հանրապետության մասշտաբով միջին հաշվով այդքան մարդ իրենց ընտանիքների ու հարազատների հետ միասին կտրականապես հակառակ են եղել ապստամբությանը և զենքը ձեռքին պայքարել են դրա դեմ:

Ապստամբության համակիրների և հակառակորդների խնդիրը պարզաբանելիս հարկ է նկատի ունենալ նաև հետևյալ հանգամանքը: Բոլշևիկների նկատմամբ լոյալ (չեզոք) դիրք գրաված կամ համակրող հայ հասարակության առանձին շերտեր ոչ թե ընդունում (հասկանում) էին նրանց գաղափարներն ու քաղաքականությունը, այլ, հաշվի առնելով հայության գլխին կախված ֆիզիկական անվտանգության գերխնդիրը, հանձինս բոլշևիկների՝ տեսնում էին Ռուսաստանին, որն ի զորու էր ապահովել հայության անվտանգությունը: Եվ եթե հայ ժողովրդի գլխին կախված չլիներ իր անվտանգության խնդիրը, ապա բոլշևիկների վարած ներքին և արտաքին հիասթափեցնող քաղաքականության դեմ կըմբոստանար գործնականում ամբողջ հայ հանրությունը:

Հանրապետությունում ապրող էթնիկ փոքրամասնություններից ապստամբությանը հակառակորդ, խորհրդամետ կեցվածք ունեցող ամենահավատարիմ տարրը եղել է ռուս ազգաբնակչությունը, որը գրեթե առանց դավանանքի խտրականության (աթեիստ, ուղղափառ, մոլոկան կամ դուխոբոր) աջակցել են բոլշևիկներին ու Կարմիր բանակին: 1922 թ. գյուղատնտեսական վիճակագրության տվյալներով հանրապետության ողջ տարածքում հաշվառված են եղել 19173 ռուսներ, որից 13 հազարը արական սեռի[34]: Այդ նշանակում է, որ շուրջ 10 հազար ռուսներ, չհաշված, իհարկե, Կարմիր բանակի ռուս սպա-զինվորներին, աներկբա պաշտպանել են բոլշևիկներին, որովհետև «բոլշևիկ ասելով հասկանում էին ռուս և Ռուսաստան»[35]:

Ապստամբության դեմ պայքարող մարտական գլխավոր ուժը Հայաստանի Կարմիր բանակն էր, որը 1921 թ. փետրվարի 1-ի դրությամբ ուներ 15–20 հազար զինվոր ու սպա[36]: Սակայն պարզվում է, որ այդ բանակի ոչ բոլոր զորամասերն են եղել մարտունակ ապստամբների դեմ կռիվներում: Քիչ չեն արձանագրված դեպքերը, երբ առանձին զորամասեր գերի են ընկել, լքել ու անցել են ապստամբների կողմը[37]: Բանն այն է, որ Հայաստանի Կարմիր բանակը հիմնականում նախկին հանրապետության վերակազմավորված բանակն էր, զինվորների մի մասը տրամադիր չէր զենք բարձրացնելու ապստամբ ժողովրդի վրա, կար հայը հայի դեմ զենք չբարձրացնելու հոգեբանական գործոնը: Սակայն դրա փոխարեն Հայհեղկոմի թիկունքին կանգնած էր մի զորեղ արտաքին գործոն՝ Խորհրդային Ռուսաստանն ու առաջին հերթին նրա Կարմիր բանակը: Վրաստանի խորհրդայնացումից հետո 11-րդ Կարմիր բանակի երկու՝ 18-րդ և 20-րդ դիվիզիաները ոչ պակաս 20-հազարանոց զորքով՝ Մ. Վելիկանովի ընդհանուր հրամանատարությամբ, կրկին ինտերվենցիա կատարեցին Հայաստան՝ «Հանրապետության աշխատավորությանը ցույց տալով ինտերնացիոնալ օգնություն»: Հենց նրա բռնի միջամտությամբ էլ ժողովրդի անկանոն ապստամբական ուժերը պարտություն կրեցին ու կրկին վերահաստատվեց խորհրդային իշխանություն:

Այսպիսով, Փետրվարյան ապստամբությունն իր բնույթով հակախորհրդային ելույթ էր՝ ուղղված ամեն տեսակ բռնության, հարստահարության ու անարդարության դեմ հանուն Հայաստանի ազատության և անկախության:

32. Геноцид армян, т. 2, ч. 1, М., 2003, с. 424.
33. Ղազախեցյան Վ. Ն., Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006, էջ 17:
34. «Հայաստանի ազգաբնակչությունը...», էջ 92–94:
35. Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Զ, Բէյրութ, 1967, էջ 90:
36. Боевой путь 11-й Красной Армии (сборник документов), ԲՀԱ, Ե., 1978, թիվ 1 (50), էջ 87–88, Հարությունյան Կ., Հայկական ազգային զորամիավորումները (1918–1945 թթ.), Ե., 2002, էջ 84–85:
37. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 212, թ. 1, գ. 231, թ. 1, «Ազատ Հայաստան», 9 մարտի 1921 թ., 22 մարտի 1921 թ. և այլն:

ԱՎԻԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արծրուն Հովհաննիսյան

Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը հիմնովին վերակառուցել է Ստեփանակերտի օդանավակայանը՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին: Սկզբում կօգտագործվեն մինչև 50-60 տեղանոց փոքր ինքնաթիռներ և չվերթներ կիրականացվեն Ստեփանակերտ-Երևան ուղղությամբ, որոնք ընդհատվել էին դեռևս տասնյակ տարիներ առաջ:

Հարց է առաջանում, թե ի՞նչ կարիք կա այսօր Արցախի և մայր հայրենիքի միջև օդային կապ հաստատել, եթե հստակ և անխափան գործում է Երևան-Գորիս-Ստեփանակերտ մայրուղին: Բացի դրանից, կա նաև այլընտրանքային, ոչ այնքան բարվոք, սակայն երթևեկելի Վարդենիս-Մարտակերտ ճանապարհը: Սակայն, փոքրիկ վերլուծությունը գալիս է ապացուցելու, որ օդային կամուրջն ավելի քան անհրաժեշտ է, և ոչ միայն զբոսաշրջության, սպորտի կամ այլ էկզոտիկ ոլորտների զարգացման համար, ինչպես կարծում են շատերը: Այդ օդային կամուրջը դեռ վաղուց պիտի լիներ, ուստի մինչև օրս այն չունենալը պետք է համարել մեր բացթողումներից ոչ վերջինը: Իզուր չեն այսօր Ադրբեջանի ղեկավարները հոխորտում՝ թռիչքների վերականգնմամբ զայրացած: Այդ օդային կամուրջը կարող է լրջորեն նպաստել Արցախի տնտեսական զարգացմանը, օտարերկրյա ներդրումներին, զբոսաշրջությանը և այլն:

Ստեփանակերտի օդանավակայանը

Մի-8Տ

Հիմնախնդիրը

Հայաստանի Հանրապետությունն անկախացումից ի վեր ապրում է շրջափակման պայմաններում: Հայկական տնտեսությունը, առանց այդ էլ չունենալով համաշխարհային հզորության արտադրական միավորումներ և օգտակար հանածոների մեծ պաշարներ, ապրում է դժվարին ժամանակներ: Նույն շրջափակումն ու զրկանքներ է կրում հայկական երկրորդ հանրապետությունը, որը բոլոր կենսական թելերով կապված է մայր հայրենիքին:

Հայ ժողովրդի գոյատևման համար երկիր են ներկրվում առաջին անհրաժեշտության բազում պարագաներ, որոնք չեն ստեղծվում մեր երկրում: Տնտեսական թեկուզ չնչին աճի հետ, բնականաբար, աճում են արտահանման և ներկրման ծավալները, զբոսաշրջությունը և այլն:

Ան-2

Բացի ավիացիոն բեռնափոխադրումներից, ինչպիսի՞ բեռնափոխադրման մասին կարող է խոսք լինել, երբ մեր երկիրը գտնվում է գրեթե բացարձակ շրջափակման մեջ: Թուրքական պետությունները, շարունակելով իրենց ծավալապաշտական նկրտումները, վտանգում և սպառնում են հայոց պետականության գոյությանը: Իսկ Վրաստանի կողմից բեռնափոխադրումների համար ստեղծվող հիմնականում արհեստական խոչընդոտները զգալիորեն կաշկանդում են դրանց ծավալների մեծացումը: Այնուամենայնիվ, այսօր մեր նորանկախ պետությունը ընդունվել է Առևտրի միջազգային կազմակերպության շարքերը և հայրենական արտադրության ապրանքներ է արտահանում բազում երկրներ: Հայկական կոնյակն ու կոնֆետը, ծխախոտն ու կաթնամթերքն արդեն հարգանք են վայելում հազարավոր կիլոմետրեր մեզանից հեռու: Այսօր ամբողջ աշխարհում տնտեսության զարգացման համար մեծ դեր է խաղում ազատ առևտուրը և տնտեսական լայն շփումները: Նման, կարելի է անվարան ասել, անելանելի պայմաններում Հայաստանն արդեն մեկ տասնամյակից ավելի է, ինչ կատարում է ավիացիոն բեռնափոխադրումներ: Տրանսեսական լուրջ աճը ոչ հեռու անցյալում մեզ կարող էր կանգնեցնել բեռնափոխադրման անախադեպ ծավալների իրականության առջև: Հաշվի առնելով այս իրավիճակը՝ պետք է փաստել, որ օդային բեռնափոխադրումը մեզանում առանձնապես կարևոր դեր է ստանում: Հետևաբար պետք է լրջորեն ուսումնասիրել օդային բեռանափոխադրման առանձնահատկությունները, խնդրի տեխնիկական, տնտեսական, ապահովման և այլ կողմերը: Մարդատար ինքնաթիռների թռիչքների ծավալների աճը և դրանց համապատասխան արձագանքն այսօր «Արմավիա» և այլ ավիաընկերությունների կողմից ընդունել են օրինաչափ և դինամիկ բնույթ: Այս առումով ասելիք քիչ կա:

Օդային բեռնափոխադրումների խնդիրը պետք է ուսումնասիրել նաև ռազմական պայմանների տեսանկյունից, ինչը միանշանակ կարևոր է հատկապես Արցախի պարագայում: Արցախյան շարժման սկզբից Հայաստանի հետ ցամաքային սահման չունեցող Արցախի միակ փրկությունն օդային բեռնափոխադրումներն էին: Թռիչքներն իրականացնում էին հիմնականում չորս-հինգ «Մի-8Տ» ուղղաթիռները, տասը-տասներկու փոքրիկ «Ան-2» և մի քանի «Յակ-40» ինքնաթիռները:

«Մի-8» ուղղաթիռները և «Յակ-40» ինքնաթիռները հասցնում էին օրական մի քանի թռիչք կատարել (ընդամենը՝ օրական մի քանի տասնյակ թռիչք): 1990 թ. հոկտեմբերի 17-ից Արցախի միակ օդանավակայանը գտնվում էր ադրբեջանական ՕՄՕՆ-ի հրսկողության տակ, որի պատճառով հայկական կողմը ստիպված էր հրաժարվել «Յակ-40» ինքնաթիռների կիրառումից: Արցախահայության հույսը միայն ուղղաթիռներն էին, որոնք ստիպված վայրէջք էին կատարում ամեն մի հարմար դաշտում: Թեև ուղղաթիռները հին էին և աշխատում էին գերբեռնվածության պայմաններում, սակայն հայ օդաչուներն ուղղաթիռներով կատարում էին տասնյակ թռիչքներ: 1990 թ. կատարվել է 5200 ժամ թռիչք: Ուղղաթիռները բարձում էին սահմանվածից կրկնակի ավելի բեռ: Եղել է դեպք, երբ 25-30 տեղանոց «Յակ-40» ինքնաթիռը Ստեփանակերտի օդանավակայանից վերադարձել է 86 ուղևորով: Տասից քիչ «Մի-8Տ» ուղղաթիռները քանակապես և որակապես ի վիճակի չէին դիմանալու 1988-90 թթ. թռիչքների ինտենսիվությանը: Օդանավակայանի ղեկավարությունը դիմում է երկ-

Ա-380

ԱՆ-124 Ռուսլան

Յակ-40

րի կառավարությանը, և մեծ դժվարություններով ՌԴ-ից գնվում է հինգ նոր «Մի-8 ՄՏՎ-1» ուղղաթիռ: Նոր մեքենաները 3-4 տոննայի փոխարեն կարող էին 5-5,5 տոննա բեռ կրել:

1992 թ. փետրվարին Խոջալուի կրակակետի լռեցումից հետո օդանավակայանն անցնում է ինքնապաշտպանական ուժերի հսկողության տակ և վերսկսվում են «Յակ-40» ինքնաթիռների թռիչքները: Դրանք կապված էին անասելի դժվարությունների և վտանգների հետ: Հակառակորդի զենիթային սպառազինության հակազդեցությունից խուսափելու համար ինքնաթիռները Ստեփանակերտին մոտենում էին 5000 մ բարձրության վրա, իսկ հետո սկսում էին փոքր շառավղի զսպանակավոր պտույտներով իջնել: Նույն ձևով վեր էին բարձրանում և ուղղվում դեպի Երևան: Հնարքն այնքան էլ դյուրին չէր, իսկ այս հատուկ մարտավարությանը տիրապետում էին ոչ բոլոր օդաչուները:

Ան-70

Շուշին ազատագրելու գործողության նախապատրաստման ընթացքում կատարվում էր «Յակ-40»-ների մինչև 15 թռիչք/օր: Մարտի 12-ից մինչև մայիսի 5-ը կատարվել է 690-ից ավելի ինքնաթիռաթռիչք: Արցախ է տեղափոխվել ավելի քան 2700 տոննա բեռ: Ցավոք, օդանավակայանի առավելագույն հնարավորությունը «Յակ-40»-ներն էին, որոնք կրում էին ընդամենը 3-3,5 տ բեռ: Ահա արցախյան գոյամարտի ավիաբեռնափոխադրումների քրոնիկոնը:

Ընդհանուր առմամբ քաղաքացիական ավիացիայի օդաչուները միայն տրանսպորտային նպատակներով կատարել են ավելի քան 3700 թռիչք, ընդհանուր 11000 թռիչքաժամով, որից միայն 1500-ը գիշերային ժամերին էին, իսկ մնացածը՝ հիմնականում բարդ օդերևութաբանական պայմաններում: (Այս տվյալները վերցված են «Էրեբունի» օդանավակայանի գրանցման մատյաններից): Հաշվառված չեն մատյաններում Գորիսի կամ Կամոյի գրանցումով դեպի Արցախ կատարված թռիչքների տարբերությունը կազմող ժամերը: Այս թռիչքաժամերի ընթացքում տեղափոխված բեռների քանակը դժվար է գերագնահատել: Դրանք եղել են պատերազմին անհրաժեշտ զինամթերք, վառելանյութ, զենք, հանդերձանք ու սննդամթերք: Վերադարձին հայ օդաչուները բերում էին իրենց վիրավոր հայրենակիցներին, ծերերին, երեխաներին ու կանանց:

Իրադրությունը շատ չի փոխվել և, ամենակարևորը, կարող է կրկնվել մեր հարևանների թեթև ձեռքով: Այնպես որ հիմնախնդիրը պետք է ուսումնասիրել ամենայն մանրամասնությամբ:

Բեռնատար ինքնաթիռները

Այսօր, և անցած մեկ ու կես տասնամյակի ընթացքում, հայկական ավիացիոն բեռնափոխադրումները կատարվում են հիմնականում խորհրդային արտադրության բեռնատար ինքնաթիռներով: Դրանք են «Ան-26», «Ան-12», «Իլ-76» ինքնաթիռները: Ոչ հաճախ կիրառվում են նաև այլ պետությունների արտադրության մի քանի ինքնաթիռների տեսակներ և խորհրդային արտադրության «Ան-22», «Ան-124» ինքնաթիռները: Հետաքրքրական էր 2009 թ. Երևանի ջերմաէլեկտրակայանի համար առանձնապես մեծ չափերի և քաշի (187,6 տոննա) գեներատորի Հայաստան բերելը: Այն իրականացվեց աշխարհում ամենամեծ բեռնատար ինքնաթիռի՝ «Ան-225 Մրիյա»-ի շնորհիվ, քանի որ Հայաստանը գտնվում է շրջափակման մեջ: Թվարկված ինքնաթիռները, իհարկե, կարող են տարբեր ծավալի և քաշի բեռներ հասցնել տարբեր հեռավորությունների վրա: Նշվածները պատկանում են տարբեր ժամանակների և տարբեր դասակարգումների: Ամբողջ աշխարհում հիմնականում կի-

Ան-26

Ան-124

Ան-225

դառվում են միջին բեռնատարները, որոնցից է «Իլ-76»-ը, որի բեռնատարողությունը կազմում է մինչև 50 տոննա: Թվարկված ինքնաթիռներից կան տեսակներ, որոնք մեր պայմաններում կիրառվում են ավելի հաճախ, չնայած որ արդեն վաղուց հնացել են: Մինչև ռեակտիվ շարժիչներով բեռնատարների լայնորեն կիրառումը աշխարհում գոյություն չուներ 50 (բացառությամբ «Ան-22»-ի) և ավելի տոննա բեռնատարողություն ունեցող ինքնաթիռ:

Բեռնատար ինքնաթիռների շահագործման համար կարևոր դեր է խաղում նրանց տեսակը՝ ըստ շարժիչների, որոնք լինում են պտուտակավոր և ռեակտիվ: Պտուտակավոր շարժիչներով ինքնաթիռներն ի հայտ են եկել ավելի վաղ և հիմնականում ներկայացված են միջինից փոքր ծանրությունների տեղափոխման ոլորտում: Ռեակտիվ շարժիչներով ինքնաթիռներն ի հայտ են եկել ավելի ուշ, ավելի արդիական են և կարող են կրել ավելի մեծ բեռներ: Սակայն այս երկու տեսակի ինքնաթիռների մեջ կա մեկ լուրջ էական տարբերություն: Դա նրանց շահագործման ծախսատարությունն է: Քանի որ, ինչպես նշեցինք, աշխարհում հիմնականում շահագործվում են միջին տարողության բեռնատարները, իսկ այդ ասպարեզում գործում են ռեակտիվ, թանկարժեք մեքենաները, ապա մասնագետները կատարելագործում են ավելի էժան պտուտակավոր շարժիչները՝ փորձելով բարձրացնել հզորությունը, որպեսզի միջին բեռնատարների ասպարեզը լցվի ավելի էժան ինքնաթիռներով: Արդյունքում ստացվում է, որ ռեակտիվ թանկարժեք ինքնաթիռների շահագործումը դառնում է քիչ ցանկալի և օգտակար: Որպես կանոն, նման ինքնաթիռների արագության առավելությունն այնքան էլ չի գրավում բեռնափոխադրողներին: Միտումը չի վերաբերում ծանր բեռների փոխադրմանը, որոնց ծավալն այնքան էլ մեծ չէ: Այսինքն՝ նման ինքնաթիռներն օգտագործվում են ստիպված: Ամբողջ աշխարհում շահագործվում են ընդամենը մի քանի տասնյակ «Ան-124 Ռուսլան» և «Ց-5 Գելեքսի» ռեակտիվ շարժիչներով ծանր ինքնաթիռներ և քիչ ավելի՝ մարդատար ինքնաթիռների հիման վրա ստեղծված ծանր բեռնատարներ («Բոինգ-747-400», «Բոինգ-777-200ԼՌ», «Իլ-96Տ», հեռանկարային «Ա-380-800Ֆ» և այլն):

Նոր տեսակի պտուտակավոր ինքնաթիռների դասին են պատկանում «Ան-70» և «Ց-130Ջի» բեռնատար ինքնաթիռները, ինչպես նաև՝ նոր ստեղծվող, համաեվրոպական «Ա-400»-ը: Համեմատության համար նշենք, որ «Ան-70»-ն ԱՊՀ երկրներում լայն տարածում գտած «Իլ-76»-ի մրցակիցն է և, նույն հեռավորության վրա թռչելիս ունենալով գրեթե նույն բեռնափոխադրման տվյալները, ունի վառելիքի ծախսման կրկնակի բարելավված տվյալներ: Ինչպես նաև պահանջում է զգալիորեն կարճ թռիչքուղի: Նոր ինքնաթիռի հիմնական գաղտնիքը նոր տեսակի հովհարապտուտակային տիպի շարժիչներն են: Մասնագետները չեն ցանկանում մեծացնել բեռնատար ինքնաթիռների տարողունակությունը: Ահա այսպիսի զարգացման միտում ունեն բեռնափոխադրող ինքնաթիռները: Զարգացումը, բնականաբար, մեծ կարևորություն է ներկայացնում նաև հայկական բեռնափոխադրումների համար, սակայն այս ինքնաթիռները դեռ լայնորեն չեն կիրառվում:

Կատարելով անհրաժեշտ հետևություններ այս ամենից և հաշվի առնելով հայկական բեռնափոխադրումների աճի ծավալները՝ անհրաժեշտ է փաստել, որ ապագայում մեծ դեր կարող է հատկացվել նաև մեծ ծավալների բեռնափոխադրումներին (հիսուն և ավելի տոննա բեռների հաճախակի փոխադրումներին): Հիմք ընդունելով այս ամենը՝

անհրաժեշտ է հայ բեռնափոխադրողների համար մտածել նոր ինքնաթիռի և ծավալների մասին: Աշխարհում կա մի ինքնաթիռ, որի մասին մենք ակնարկեցինք, որը միաժամանակ համարվում է միջինից ծանր բեռների կրող և իր քիչ ծախսատարությամբ ռեկորդակիր է: Աշխարհում եղած բոլոր միջին բեռնատարները, անկախ շարժիչների տեսակից, վառելանյութի ծախսի առումով ունեն «Ան-22»-ից վատ ցուցանիշ: Ծախսի ցուցանիշով՝ «Ան-22»-ին են մոտենում միայն վերը նշված «Ան-70»-ը և «Ա-400»-ը: Վերջինս դեռ խմբաքանակային արտադրության մեջ չկա, ավելի թանկարժեք է և ունի ընդամենը 40 տոննա բեռնատարողություն: «Ան-22»-ը 50 տոննա բեռով կարող է թռչել 5000 կմ՝ օգտագործելով 43 տոննա վառելանյութ այն ժամանակ, երբ «Ան-70»-ը 35 տոննա բեռով կարող է թռչել 3800 կմ՝ օգտագործելով 38 տոննա կերոսին: Համեմատության համար նշենք, որ լայնորեն կիրառվող «Իլ-76»-ը 42 տոննա բեռով կարող է թռչել 4000 կմ՝ օգտագործելով 81 տոննա կերոսին:

«Ան-22»-ի միջին բեռնատարողությունը կազմում է 40-60 տոննա, իսկ 100 տոննա բեռով այս ինքնաթիռը սահմանել է համաշխարհային ռեկորդ: Բացի ծանրաքաշ «Ռուսլանից» և «Գելեքսիից», աշխարհում միայն «Ան-22»-ը և ամերիկյան «Ց-17»-ը կարող են տանել 60 տոննայից ավելի բեռ (չհաշված մարդատար ինքնաթիռների հիման վրա ստեղծված մի քանի բեռնատար ինքնաթիռները, որոնց ծախսը ևս զգալիորեն թանկ է): Հենց այս երկու ինքնաթիռներն են հայկական ավիացիոն բեռնափոխադրումների ապագա երաշխիքները: Ամերիկյան բեռնատարը ռեակտիվ ինքնաթիռ է և նրա չափորոշիչները բոլորովին այլ են, սակայն վերջինիս տվյալները ևս գրավիչ են:

Նախ անդրադառնանք «Ան-22»-ին, որի ընդարձակ բեռնախուցը թույլ է տալիս օգտագործել իր մեծ բեռնատարողությունն ամբողջությամբ: Այս ինքնաթիռների շահագործումը, մեր խորին համոզմամբ, մեծ հետաքրքրություն պիտի ներկայացնի հայկական բեռնափոխադրումների համար: Ներկայումս «Ան-22» ինքնաթիռները սահմանափակ քանակությամբ շահագործվում են ռուսական ՌՕՈՒ-ում և «Աերոֆլոտ» կազմակերպությունում (ընդհանուր քանակը 80-ից պակաս է): Հնարավոր է 80-ից մի քանի ինքնաթիռների գնում կամ վարձակալում, ինչը ներկայումս շատ տարածված է: Սակայն, հաշվի առնելով այդ ինքնաթիռների տարիքը, պետք է ասել, որ նրանք չեն կարող մեզ երկար ծառայել: Կիևում գտնվող «Անտոնով» ընկերության մասնագետները համապատասխան պայմանագրերի դեպքում պատրաստ են արտադրել համապատասխան քանակությամբ նման ինքնաթիռներ՝ նույնիսկ որոշ կատարելագործումներով: Քանակությունը կարող է կազմել մինչև 20-30 ինքնաթիռ: Մոտ ապագայում տարվա կտրվածքով կկատարվեն նման ինքնաթիռների առնվազն մի քանի հարյուր թռիչքներ: «Ան-22»-ի երեք թռիչքով կտեղափոխվի «Իլ-76»-ի չորս անգամով տեղափոխած բեռը՝ միաժամանակ ծախսելով երկու անգամ պակաս վառելանյութ: Դժվար չէ հաշվարկել, թե որքան վառելանյութ կարելի է խնայել 300 կամ 400 թռիչքների դեպքում:

Նշենք, որ նման ինքնաթիռները կարող են ձևափոխվել և կիրառվել որպես մարդատար ինքնաթիռներ: «Ան-22»-ի ձևափոխված տարբերակը բարձրակարգ սրահներում կարող է տանել մինչև 250-300 ուղևոր՝ ունենալով մինչև 10-15 հազար կիլոմետր թռիչքի հեռավորություն:

Իսկ նման ինքնաթիռով թռչող ուղևորներն անպայման կվճարեն զգալիորեն պակաս գումար: Ներկայումս աշխարհում կիրառվում են նաև ուղևորատար մեծ ինքնաթիռների բեռնատար տարբերակներ, որոնց բեռնատարողությունը հասնում է վերը նշված բեռնատարների մակարդակին, սակայն նման ինքնաթիռները նախ և առաջ թանկարժեք են և ծախսատարու-

Բոինգ 747-400

Բոինգ 777-200

Ց-5 Գելեքսի

թյամբ զիջում են «Անթեյ»-ին:

Կապված միջազգային պահանջների հետ՝ «Անթեյ»-ին թույլ չեն տա մուտք գործել Եվրոպա, սակայն թեկուզ միայն ԱՊՀ տարածքներում թռչելու համար «Ան-22»-ը լուրջ միջոցներ կխնայի: Չէ՞ որ հիմնական ապրանքաշրջանառությունը Հայաստանը կատարում է ԱՊՀ պետությունների հետ:

Տնտեսական զարգացման այս նոր փուլում հարկավոր է մտածել ապագայի գործերի մասին: Անհրաժեշտ է չմոռանալ նաև հայ ժողովրդին ապագայում սպասվող հնարավոր պատերազմը, որը ներկայումս գտնվում է գաղափարական և նախապատրաստական փուլում: Ռազմական գործողությունների ժամանակ մեզ հարկավոր է խնայել ամեն մի լուման: «Ան-22» ինքնաթիռը, լինելով անցնող ժամանակների ներկայացուցիչ, կարող է դառնալ ապագայի ձեռքբերումների երաշխիք:

Եվրոպական այլ և ավելի հեռավոր երկրների հետ օդային բեռնափոխադրումը անհրաժեշտ է կառուցել հենց ամերիկյան «Ց-17» ինքնաթիռի հիմքի վրա, քանի որ այն իր տեսակի մեջ ամենամեծ բեռնատարն է և ամենաքիչ ծախսողը: Ունի լայն և ընդարձակ բեռնախուց և հաջողությամբ վայրէջքներ է կատարում նաև ոչ կարծր ծածկույթների վրա:

Օդանավակայանները

Օդանավակայանները երկրի անվտանգության ապահովման համար ունեն առանցքային նշանակություն: Ինչպես վերը ներկայացվեց, Հայաստանի Հանրապետությունը ներկայումս շատ է կախված օդային բեռնափոխադրումներից, նույնիսկ անթույլատրելի չափով: Սակայն իրավիճակից դուրս գալու մոտալուտ լավագույն լուծումն այդ բեռնափոխադրումներն ավելի շահավետ դարձնելն ու ճիշտ կազմակերպելն է: Ինքնաթիռների մասով առաջնային լուծումները ներկայացնելուց հետո պետք է ներկայացնել նաև օդանավակայանային ենթակառուցվածքների առանձնահատկությունները:

Մեզ նախ անհրաժեշտ է, որպեսզի հայրենիքում առավելագույնս շատ օդանավակայաններ ընդունեն մեծածավալ բեռներ կրող ինքնաթիռներ: Տվյալ դեպքում 100 տոննային մոտ բեռներ կրող ինքնաթիռները պետք է կարողանան վայրէջք կատարել առնվազն երեք-չորս օդանավակայաններում:

Առաջին պատճառը հենց բեռնափոխադրումների ծավալների աճն է, որը պատերազմի ժամանակ կարող է ընդունել աննախադեպ մեծ ծավալներ:

Ց-130 Զի Գելեքսի

Իլ 76

Երկրորդը բեռների հասցեական ճիշտ բաշխումն է: Օրինակ՝ 100 տոննա բեռ ընդունող մեկ օդանավակայանի դեպքում բեռը այլ քաղաք հասցնելը նորից առաջացնում է լրացուցիչ ծախսեր՝ կապված ավտոտրանսպորտի և երկաթգծի հետ: Այլ օդանավակայանի դեպքում բեռն առավելագույնս կմոտեցվի վերջնական հասցեատիրոջը:

Երրորդ պատճառը եղանակային պայմանների առանձնահատկություններն են: Օրերով ու շաբաթներով մեկ օդանավակայանը կարող է փակ մնալ մառախուղի կամ ձնաբուքի պատճառով: Նման դեպքերը մեզանում եզակի չեն:

Նշված խնդիրներն արդյունավետ լուծելու համար այդ երեք-չորս օդանավակայանները պետք է լինեն մեկը մյուսից առնվազն 50-60 կմ հեռավորության վրա: Այսօր եղած օդանավակայանների հարմարեցման, մեծացման աշխատանքներին զուգահեռ պետք է Ջերմուկում կառուցել Երևանի և Գյումրիի օդանավակայանների չափերին համապատասխանող օդանավակայան: Նախ՝ հեռավորությունը շատ հարմար է

Երևանից, առավելագույնս մոտ է Արցախին և բավարար հեռավորության վրա է գտնվում ադրբեջանական և թուրքական սահմաններից:

Հաջորդ քայլն այն պետք է լինի, որ Արցախում պետք է գործեն առնվազն երկու-երեք օդանավակայաններ, որոնցից մեկը պետք է պարտադիր կարողանա ընդունել միջին բեռնատար ինքնաթիռներ՝ մինչև 40-50 տոննա բեռնատարողությամբ: Մյուս երկուսը կարող են լինել փոքրիկ օդանավակայաններ՝ հասարակ, ոչ կարծր ծածկույթ ունեցող թռիչքուղիով: Արցախին մոտիկ Հայաստանի շրջաններում ևս պետք է գործեն համանման մի քանի օդանավակայաններ:

Օդանավակայանների ռազմավարական նշանակությունը միայն վերը նշվածում չի կայանում, դրանք խաղաղ և հատկապես պատերազմի ժամանակ հանդիսանում են ռազմական ավիացիայի մշտական կամ ժամանակավոր բազաներ: Օդանավակայաններն առաջին տեղում են հակառակորդի կողմից հարվածի ենթակա կառույցների ցուցակում: Այս առումով մարտական ավիացիայի համար հետաքրքրական են ջրային մակերեսների վրա առաջարկվող

Արմավիա - Ա 320

Իլ 96

օդանավակայանները, որոնք ապահովված կլինեն հակառակորդի օդային հարձակման միջոցների անակնկալ հարվածներից:

Ուղղաթիռները և փոքր ինքնաթիռները

Վերը նշվեց, որ մեր տարածաշրջանում շատ կարևոր են ուղղաթիռները, որոնք լեռնային տեղանքում շատ հարմար են բեռնափոխադրումների համար: Արցախյան գոյամարտի փորձը լավագույնս ապացուցում է այս տեսակետը: Մենք ներկայումս պետք է մեծ ուշադրություն դարձնենք հենց այս խնդրին և, ճիշտ հետևություններ կատարելով արցախյան գոյամարտից, զարկ տանք ուղղաթիռային ավիացիայի զարգացմանը: Մեզ անհրաժեշտ են 20-30 միջին բեռներ տեղափոխող, ինչպես նաև մինչև 10-15 տոննա բեռներ տեղափոխող ուղղաթիռներ:

Բացի վերը նշված ուղղաթիռներից, անհրաժեշտ է զարգացնել նաև փոքր ավիացիայի հետևյալ տեսակները՝

- մինչև 5-10 տեղանոց կամ մինչև 2 տոննա բեռներ տեղափոխող ներքին այրման և ռեակտիվ շարժիչներով ինքնաթիռներ,
- մինչև 30 տեղանոց կամ մինչև 10 տոննա բեռներ տեղափոխող ռեակտիվ շարժիչներով ինքնաթիռներ,
- մինչև 4-5 տեղանոց կամ մինչև 1 տոննա բեռներ տեղափոխող ուղղաթիռներ:

Նման թռչող սարքերը հատկապես կնպաստեն մասնավոր գործարարության, զբոսաշրջության և ավիացիոն սպորտի տեսակների (անկարգելային, պարապլանային, ճախրաթիռային և այլն) զարգացմանը, ինչը իր հերթին ազգային անվտանգության ռազմավարական խնդիր է:

Եզրակացություն

Արցախյան գոյամարտի ընթացքում մեր կողմից թռիչքների 80-90 տոկոսը կազմել են տրանսպորտային փոխադրումները: Մինչև Լաչինի միջանցքի բացվելը, հայկական կողմից տրանսպորտային բոլոր փոխադրումները կատարվել են ավիացիայի միջոցով: Առանց վարանելու պետք է փաստել, որ ավիացիան թույլ չտվեց հակառակորդին հայաթափել Արցախը: Եվ եթե ավիացիան ունենար ոչ թե 7-8, այլ 30-40 տրանսպորտային ուղղաթիռ, որոնցից գոնե մի մասն ունենար ոչ թե մինչև 5, այլ մինչև 10-15 տոննա բեռնատարողություն, ապա շատ հարցեր այսօր այլ պատասխան կունենային: Թերևս, հնարավոր կլիներ նաև հայաթափումից փրկել Շահումյանը:

Պատմությանը հայտնի են մի քանի դեպքեր, երբ տրանսպորտային ավիացիան որոշիչ դեր է խաղացել այս կամ այն

հակամարտության ժամանակ: Մասնավորապես հայտնի է 1940-45 թթ. Չինաստանի փրկության համար դաշնակիցների կողմից կազմակերպված կյանքի ճանապարհը՝ «Գորբը», որն անցնում էր Հնդկաստանի ջունգլիների վրայով: 600 տրանսպորտային ինքնաթիռներն ամսական Չինաստան էին հասցնում մոտ 30000 տոննա բեռ, և դրանց շնորհիվ պայքարը ճապոնացիների դեմ շարունակվեց մինչև հաղթական ավարտ:

Մյուս պատմությունը հայտնի է որպես Բեռլինի «փրկության կամուրջ», որը ստեղծեցին ամերիկյան բեռնատար ինքնաթիռները 1948 թ. մարտին: Խորհրդային ղեկավարությունը շրջափակել էր Գերմանիայի մայրաքաղաքի մի մասը՝ նպատակ ունենալով տնտեսապես խեղդել վերջիններիս: Ամերիկյան ղեկավարությունն օրական 4500 տոննա բեռների փոխադրման ծավալներով մի կերպ փրկեց քաղաքը սովահարությունից ու ցրտից: Գործողությունը տևել է մոտ մեկ տարի:

Նման մի կամուրջ էին ստեղծել հայ օդաչուներն Արցախի համար: Բացի դրանից, հայկական կողմից ձեռնարկված հիմնական հարձակողական գործողությունների նյութական պաշարների նախապատրաստական աշխատանքները կատարել է ավիացիան: Գոյամարտի փորձից պետք է կատարել ճիշտ եզրակացություններ:

Հաշվի առնելով հայության և հայկական պետությունների առաջ ծառացած խնդիրները, արցախյան գոյամարտի վերլուծությունը և համաշխարհային ավիացիայի զարգացման միտումները՝ պետք է փաստել, որ ներկայումս խիստ անհրաժեշտ է զարկ տալ ընդհանուր քաղաքացիական և սպորտային ավիացիայի զարգացմանը: Բացի վերը շարադրված տնտեսական և ռազմավարական նախապայմաններից, նշենք, որ բազմատեսակ ավիացիոն սպորտի զարգացումը մեծապես կարող է նպաստել ճիշտ սերնդակերտմանը և առողջ ապրելակերպի զարգացմանը, որը ռազմավարական խնդիր է յուրաքանչյուր պետության համար:

Այնպես որ Ստեփանակերտի օդանավակայանի վերաստեղծումը փաստացի պետական կարևորագույն խնդիր է: Այն ուղղված է Արցախի մեկուսացման և շրջափակման ճեղքմանը, որը համազգային ձեռքբերում կարելի է համարել: Ինչ մնում է Ադրբեջանի հերթական հոխորտանքներին և սպառնալից հայտարարություններին, ապա դրանց դինամիկան չի փոխվել: Փաստորեն տվյալ դեպքում պետականորեն խոստովանվում է, որ Ադրբեջանը կարող է գնալ պետականորեն իրականացվող ահաբեկչության: Համաշխարհային պրակտիկայում չկա մի դեպք, որ միտումնավոր քաղաքացիական ինքնաթիռ խոցվի և այդ գործողությունը չանվանվի ահաբեկչություն: Ադրբեջանը շարունակում է ահաբեկել հայ ժողո- վրդին և նրան միայն արժանի պատասխանը կարող է զսպել:

ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ՊԵՏԻ ՀՈՒՇԵՐԸ

Գեներալ Պավել Զավարզինը մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանի տարբեր նահանգներում, նախքան քաղաքական վտարանդի դառնալը՝ նաև Մոսկվայում, եղել է պահնորդական բաժանմունքի պետ: Հատկապես Դոնի Ռոստովում ծառայության տարիներին նա պարբերաբար առնչվել է Հայ Յեղափոխական Դաշնակցության ընդհատակյա պայքարին, որը միաժամանակ մղվում էր ցարական Ռուսաստանի ու սուլթանական Թուրքիայի դեմ: Ուշագրավ է, որ պահնորդական բաժանմունքի պետ լինելով հանդերձ, գեներալը ըստ արժանվույն է գնահատում դաշնակցականների խիզախությունը, անձնազոհությունը, հատկապես՝ հայրենանվիրումը:

Ավելացնենք, որ Պավել Զավարզինի հուշերը 1930 թ.-ին լույս են տեսել Փարիզում, ֆրանսերեն, որից և կատարված է «Դրօշակ»-ի ընթերցողներին ներկայացվող 9-րդ գլխի թարգմանությունը:

Գ.Ջ.

ՊԱՎԵԼ ԶԱՎԱՐԶԻՆ

ՀԱՅՈՒՀԻՆ

Օդեսայի ընկերվար-հեղափոխականների հետաքննությունն ավարտելուց հետո ինձ Դոնի Ռոստովի պահնորդական բաժանմունքի պետ նշանակեցին:

1905 թ.-ի հունիսից անցա իմ նոր պաշտոնին:

Այդ տարիներին ընդհատակյա բուռն գործունեությամբ իշխանություններին առանձնապես անհանգստություն, մտահոգություն էին պատճառում ազգային կազմակերպությունները.

1. Հրեական «Բունտ» կուսակցությունը:

2. Հայկական «Դաշնակցություն» կուսակցությունը:

3. Լեհական ընկերվարական կուսակցության հեղափոխական թևը:

* * *

Իվան Պետրովիչ Ստեպանովը, որ հաղթանդամ, նրբադեմ, շագանակահեր, մոտ 26 տարեկան երիտասարդ էր, Կերչից Դոնի Ռոստով եկավ 1906 թ.-ի սեպտեմբերին: Նա այնտեղ լրտեսությամբ էր զբաղվել, կրել էր «Սալտո» գաղտնանունը, որը ես, ծառայության ընդունելիս, հարկ չհամարեցի փոխել: Մինչ այդ երիտասարդը եղել էր շրջիկ կրկեսի ծաղրածու ու լարախաղաց, սակայն ծունկը վնասել ու ստիպված հրաժարվել էր «բեմական» ասպարեզից: Այդ ասպարեզից էլ պահել էր թափառելու, տեղաշարժվելու սերը, ինչը, բնական է, չէր կարող նախկինի պես հանապազօրյա հացը վաստակելու խնդիրը լուծել:

Սալտոն հնարամիտ էր ու ճարպիկ, արտասովոր, զվարճալի պատմություններով կարողանում էր շահել ունկնդիրների համակրանքը: Որևէ քաղաք թողնելուց առաջ նրան հաջողվում էր տեղական հեղափոխական կազմակերպություններից երաշխավորագիր կորզել, ինչը նոր ժամանած քաղաքի հեղափոխականների հետ հարաբերություն հաստատելու հնարավորություն էր ընձեռում: Երբեմն նա կարողանում էր մինչև անգամ ձեռք գցել տեղի կուսակցության կնիքը, իր համար վկայագիր կեղծել, նրա առջև բացվում էին ընդհատակյա, այսինքն՝ մարտնչող խմբավորումնե-

Ցարական Օխրանկայի ղեստր, Պետերբուրգ, 1905թ.

րի դռները: Սալտոն ուսումնասիրելով պահնորդական բաժանմունքի ձեռք բերած, բայց դեռևս չուսումնասիրված հասցեները, առանձնապես հետաքրքրվեց հրացանների ու ռումբերի՝ զինապահեստների հայտնաբերմամբ:

Նա, որպես սկիզբ, որոշեց բացահայտել Ավանեսով ազգանունով մի հայի ինքնությունը, որն ատաղձագործ էր, ապրում էր Ռոստովից ոչ հեռու՝ Նախիջևանում: Ու քանի որ ինքն էլ մի փոքր խառատ էր, աշխատանք ստանալու պատրվակով ներկայացել էր Ավանեսովին՝ վարձատրության փոխարեն միայն ուտելիք ու քնելու անկյուն խնդրել: Ավանեսովը, սակայն, նույնիսկ նման բացառիկ պայմաններով, նրան աշխատանքի չի վերցնում, որից և Սալտոն եզրակացնում է՝ արհեստանոցում օտար մարդն անցանկալի է: Մինչդեռ ակնհայտ էր, որ գործ շատ ուներ: Սալտոն իսկույն փոխում է մարտավարությունը, ասում է, որ քաղաքական գործիչ է, ոստիկանությունը հետապնդում է իրեն, ինքը կեղծանունով է ապրում ու շատ է խնդրում չմերժել: Որպես ասածի ապացույց նա Ավանեսովին է մեկնում ընկերվար- հեղափոխականների կազմակերպությունից կորզած վկայագիրը: Ատաղձագործն իսկույն որոշումը փոխում, ընդունում է Սալտոյին: Վերջինս այնպիսի եռանդով է գործի կպչում, որ արժանանում է վարպետի դրվատանքին: Ու քանի որ Սալտոն ոչ միայն բանվոր էր, այլ նաև ընդհատակյա գործիչ, մոր կողմից էլ հայ, Ավանեսովը ամեն երեկո հետը տանում է գարեջրատուն, որտեղ քաղաքական բուռն խոսակցություններ էին ծավալվում: Հետզհետե վարպետը Սալտոյին վստահում, բացվում, ասում է, որ ինքը պատահական մարդ չէ, այլ հայկական մարտական Դաշնակցություն կուսակցության անդամ:

Ռուս ժանդարմներ, 1890թ.

Մի օր էլ, երբ Սալտոն իր գործով էր զբաղված, անծանոթ երիտասարդ է արհեստանոց մտնում: Օտարականն ըստ երևույթին հաճախորդ էր, որովհետև, առանց վարպետին բարևելու, խնդրում է որոշ արտադրանմուշներ ցույց տալ: «Նա առանձնապես պատրաստի արտադրանքով հետաքրքրվողի տեսք չունի»,- անծանոթին որոշ ապրանքներ ցույց տալով մտածում է Սալտոն: Անսպասելի՝ անծանոթը սկսում է վարպետի հետ հայերեն խոսել: Սալտոն մի քիչ հասկանում էր հայերեն:

- Դուրս գանք,- ի վերջո Ավանեսովին առաջարկում է այցելուն:

Վարպետը, սակայն, այլ որոշում է կայացնում: Սալտոյին ասում է, որ հաճախորդը տարբեր, արհեստանոցում չեղած ապրանքներ էլ է ուզում տեսնել, կարգադրում է անմիջապես գնալ, քաղաքից բերել: «Հասկանալի է՝ նրանք ուզում են առանց վկայի խոսել»,- ինքն իրեն մտածում է Սալտոն: Դա նրան նեղացնում, բայց չենթարկվել չի կարողանում: «Թերևս վարպետիս գիշերը կարողանամ խո-

սեցնել»,- գնած ապրանքները հանրակառքով բերելիս մտածում է նա: Բայց, հենց այդ պահին, Սաղովայա փողոցում նկատում է արհեստանոցում թողած երիտասարդին, ում ձեռքին փաթեթ, գրպանում՝ անդրավարտիքը ուռեցրած խոշոր իր է լինում: Նույն ակնթարթին կրկեսում ձեռք բերած լարախաղացի ճարպըկությամբ Սալտոն ընթացող հանրակառքից ցատկում, հետևում է անծանոթին: Իհարկե, պահնորդական տեսակետից դա կոպիտ սխալ էր, որովհետև գաղտնի գործակալը բացահայտվելու վտանգին չենթարկվելու համար, պիտի չզբաղվեր հետապնդմամբ: Բավական է երիտասարդը ետ շրջվեր, որպեսզի Սալտոն ստիպված լիներ հրաժեշտ տալ իր պահնորդական գործունեությանը, եթե իհարկե բախտը բերեր ու ողջ մնար: Բայց անծանոթն ամենայն հավանականությամբ շտապում էր, այլ մտահոգություններ ուներ: Փաթեթն անընդհատ մի ձեռքից մյուսը տեղափոխելով՝ նա արագ-արագ քայլում ու ի վերջո անհետանում է «Յալթա» կահավորված հյուրատանը, որտեղ, ինչպես ավելի ուշ պարզեցինք, իջևանել էր:

Այդ ժամանակ է միայն մեր գործակալն զգում սխալն ու հիշում է, որ վարպետն իրեն սպասում է: Նա սկսում է վազել, քամու արագությամբ խուժում է արհեստանոց: Ավանեսովը, որ կանգնած է լինում գործիքների պահարանի առաջ, նրան տեսնելով անակնկալի է գալիս, ընկրկում: Հաստատ այդ օրը Սալտոն չի կարողանում արհեստավորի իր դերում մնալ՝ ուշադիր նայում է հատակին ու փոշու հետքից համոզվում է, որ պահարանը տեղաշարժված է: Վարպետը խիստ նյարդայնանում է ու մոռանալով, որ նա ոչ միայն իր բանվորն է, այլ նաև հեղափոխական ընկերը, կոպիտ ու հարձակողական հարցնում է, թե մի ամբողջ ժամ չքանալուց հետո ինչո՞ւ է ապուշի պես հայացքը հատակին հառել: Մեր «քաղաքական գործիչը», սակայն, իրեն չի կորցնում, ընդհակառակը՝ ապրում է այն զգացողությունը, որ մի ժամանակ, կրկեսում, «մահվան ցատկը» կատարելուց առաջ էր ապրում՝ նախօրոք ըմբոշխնելով հանդիսատեսի ծափահարությունները: Բերկրանքի, միաժամանակ գերակայության զգացողություն: Եթե վարպետը բարկանում է, ուրեմն անծանոթ այցելուն ամենայն հավանականությամբ հանդիմանել է նրան՝ արհեստանոց կողմնակի անձ թողնելու համար: Բայց եղածը եղած է: «Դու էլ իմ ձեռքից չես պրծնի». Սալտոն

Արշակ Գավաֆյան (Քեռի)

Քեռի, Եփրեմ,
Շիրինբեկով (թաքար), Դաշնակցական Խեչո

ցավում է միայն, որ հայի երեսին չի կարող բղավել. «Ես արդեն ամեն ինչ գիտեմ», որպեսզի վայելի իր հետ գոռգոռոցով խոսող մարտական կազմակերպության անդամի զգացած սարսափը: Բայց նա կորցնելու ժամանակ չունի, բավական բան գիտի, որպեսզի վարպետի կոպտությանը կոպտությամբ պատասխանի. արհեստանոցի դուռը շրխկոցով փակում, հեռանում է:

Նույն օրը, գաղտնի հանդիպման ժամադրավայրում Սալտոն այս ամենը պատմեց պահնորդական բաժանմունքի պետին, որը հանդիմանեց նրան Ավանեսովի հետ կապերը փոքր-ինչ շուտ խզելու համար: Քանի որ խոսքը թաքցված զենքի մասին էր, այլ անձանց փոխանցումը կանխելու համար, որոնց հետքը հնարավոր է, որ չգտնվեր, կարճ ժամանակով «Յալթա» կահավորված հյուրատան կենվորին հսկելուց հետո, որոշվեց խումբը վնասազերծել:

Ատաղձագործի արհեստանոցը խուզարկելու ժամանակ, գործիքների պահարանի հետևում, պատի մեջ, թաքցված մի արկղ գտնվեց, որտեղ մեծ թվով ատրճանակ ու փամփուշտ կար: Իրենց փամփուշտներով ինը ատրճանակ էլ կահավորված հյուրատանը, երիտասարդի իջևանած սենյակում հայտնաբերեցինք: Ակնհայտ էր, որ խումբը ահաբեկչական գործողության էր նախապատրաստվում: Բայց ո՞ւմ դեմ: Եթե Սալտոն փոքր-ինչ երկար խաղար իր դերը, թերևս պարզեր: Չնայած նրա իրավիճակը վտանգավոր էր դառնում, առաջիկայում կարող էր կասկածներ հարուցել: Բարեբախտաբար՝ երիտասարդի ծոցատետրում գտնվեցին բազմաթիվ, որոնց թվում և Ավանեսովի հասցեն, ում ձերբակալման պահին ցույց տվեցինք՝ հավատացնելու համար, թե այդ միջոցով ենք իմացել ընդհատակյա խմբի անդամ լինելը: Ահա այդպես է լինում, որ իրենք՝ հեղափոխականներն էլ չեն կարողանում խուսափել անխոհեմությունից:

Ինչ վերաբերում է երիտասարդի ծոցատետրի մյուս հասցեներին, բոլորի հետքերով էլ գնացինք ու ձերբակալեցինք, բայց իրեղեն ապացույցների բացակայության պատճառով բաց թողեցինք: Ամեն դեպքում նրանք մնացին մեր հսկողության տակ:

Մի քանի օր անց, առավոտյան, մեր լրտեսների ուշադրությունը գրավեց հսկողության տակ գտնվողներից երկուսի տարօրինակ պահվածքը: Մեկը երկու ժամ շարունակ համառորեն գնում-գալիս էր պետական դրամատան առաջ, մյուսը՝ ոչ թե գնացքով, ոտքով հասել էր երկաթուղային Բատայսկ կայարա-

նը, զրուցել ծառայողներից մեկի հետ: Կեսօրին, հսկողության տակ գտնվող երկուսն էլ անհետացել էին, այդ մասին մեր գործակալները մեզ տեղեկացրին հեռախոսով՝ «Ապրանքը չքացավ» պայմանական դարձվածքով:

Կեսօրից հետո, ժամը 2-ին, դրամատունը հսկող մեր գործակալը, դարձյալ հեռախոսով, շտապ տեղեկացրեց, որ երբ դրամատան աշխատակիցները փողը փոխադրելու համար փողոց են ելել, պարզ չէ, թե որտեղից հայտնըված զինված անձինք, որոնց թվում վերևում հիշատակված երկու հոգին, հարձակում են գործել: Ահաբեկիչները պահակախմբի վրա կրակ են բացել, երկու հոգու վիրավորելուց հետո հափշտակել են դրամի պայուսակները, կառք են նետվել, անհետացել Բատայսկի ուղղությամբ:

Ոստիկանության օգնությամբ, որն իսկույն ոտքի հանվեց, պաշարելով լրտեսների մատնանշած բոլոր տները, հաջողվեց ամբողջ խումբը կալանավորել, գողոնը դրամատուն վերադարձնել: Այս «մաքրագործումը» համենայն դեպս երկու զոհ խլեց:

Բոլոր ձերբակալվածները «Սև ագռավ» հորջորջվող ոճրախմբի անդամներ էին, եկել էին Բաքվից: Այդ հրոսակները մի ժամանակ կապեր են ունեցել Դաշնակցության տեղի կոմիտեի հետ, այդ ճանապարհով ծանոթ են եղել Ավանեսովին: Վերջինիս, ինչպես նաև «Յալթա» կահավորված հյուրատան կենվորի ձերբակալությունից հետո, որին հաջորդեց նաև զենքի առգրավումը, ազատության մեջ մնացած հանցակիցները զենք էին գնել Բատայսկ կայարանի ծառայողից:

Այնուամենայնիվ Սալտոն անընդհատ վախենում էր, որ իրեն մատնության մեջ կկասկածեն, ծայրահեղ ջղագրգիռ էր: Խիղճը հանգստացնելու համար նա բանտ գնաց, հանդիպեց իր նախկին գործատուին: Ավանեսովը ցույց էր տվել, որ շատ է ուրախացել այդ այցելության համար, խոստովանել էր, որ ձերբակալվելիս նախ նրա վրա է կասկածել, բայց հիմա արդեն գիտի, որ ծոցատետրի՝ երիտասարդի անխոհեմության զոհն է: Սալտոն շարունակել էր իր այցելությունները, վարպետին տարել էր քաղցրավենիք, հասցրել քաղաքի խոսակցությունները:

Այդ այցելություններից մեկի ժամանակ Սալտոն, բանտում, մի ծեր հայուհու է տեսնում, ում գրպանը, հանդիպմանը հետևող հրսկիչից թաքուն, Ավանեսովը ճարպկորեն երկ-

Անդրանիկ

Դրասամաս Կանայան (Դրո)

տող է խցկում: Սալտոն ձևացնում է, թե ոչինչ չի նկատում, բայց հենց հաջորդ օրվանից հայուհին հսկողության տակ վերցվեց: Առանց այդ էլ ծեր կինն իր արտաքինով, հագնվածքով, հեղափոխական բանվորների հետ ունեցած կապերով հեշտությամբ էր ուշադրություն գրավում: Նա բարձրահասակ էր, նիհար՝ կմախքային այն նիհարությամբ, որով Արևելքի ծեր կանայք հաճախ են առանձնանում: Նրա ճակատն օղակում էին կզակի տակ հանգուցված մետաքսե սև գլխաշորի տակից դուրս պրծած, ճերմակությունից փայլող մազերը: Պառավը թոշնած, մուգ դեղնավուն, խոր կնճիռներով ակոսված երես, երկար քիթ, անատամ բերան ու սև, գեղեցիկ աչքեր ուներ, որոնք պահպանել էին երիտասարդական փայլն ու կենսախնդությունը: Նրա հայացքը խորիմաստ, սևեռուն էր: Նա ոտքից գլուխ սև էր հագնում, բռնում այնպիսի գավազան, ինչպիսիք միանձնուհիներն ու քահանաներն են ունենում, ու չնայած ծանր, կոպիտ կոշիկներին, քայլում էր փութկոտ, եռանդուն:

Սալտոյի հետ բանտից վերադառնալիս, իմանալով, որ մոր կողմից հայ է, ծեր կինն անմիջապես վստահում է նրան, պատմում, որ ինքը հայ քահանայի այրի է, մոտ ութսուն տարեկան, բայց որոշել է մինչև վերջին շունչը ծառայել իր հայրենիքի բարօրությանը:

Նա հակակրանքով է խոսում Ավանեսովի մասին, ասում, որ Աստված պատժել է նրան՝ հակազգային քայլի՝ կուսակցության զենքերը հանցագործներին վաճառելու համար: Այս խոսքերից մեր գործակալը եզրակացնում է, որ պառավը հրազենի թաքստոցների՝ ու պահոցների մասին շատ բան գիտի:

Հայուհին Սալտոյին տուն չի հրավիրում, բայց մի օր, փողոցում հանդիպելով, նշան է անում մոտենալ ու խիստ ձայնով փորձում է համոզել բոլոր հեղափոխական կազմակերպությունների՝ իր ասելով ոճրախմբերի հետ կապերը խզել ու անդամագրվելով Դաշնակցությանը՝ միմիայն հայ ժողովրդին ծառայել:

- Այդ ինչպե՞ս է պատահել,- հարցնում է,- որ քեզ նման երիտասարդ ու առնական տղամարդը մինչև հիմա մեր կուսակցության շարքերում չէ: Գոնե ինձնից օրինակ վերցրու:

Բայց, Սալտոն, իհարկե, այլ սկզբունքներ, ավելի ճիշտ՝ անկեղծորեն ռուսական մտածողություն ուներ: Այս տպավորություններն ինձ հաղորդելիս ասաց, որ պետք է աչալուրջ լինել, որովհետև հայուհին չափազանց խորամանկ է, հեռատես, կասկածամիտ, միաժամանակ խորապես նվիրված է կուսակցությանը:

Իրոք, որպես ընդհատակյա գործիչ, ամենայն հավանականությամբ, նա իր կուսակ-

ցությանը անգնահատելի ծառայություններ էր մատուցում: Այդ կնոջ, ում բոլորը «մայրիկ» էին կոչում, եռանդը, հնարագիտությունն ու զգուշավորությունը բացառիկ էին, ինչպես բացառիկ էր մոլեռանդ հավատը ոչ միայն հայկական ազգային գաղափարի ճշմարտացիության, այլ նաև հանուն այդ գաղափարի պայքարի բոլոր միջոցների, որոնց թվում և ահաբեկչության նկատմամբ:

Քիչ մարդ էր այցելում նրան, ովքեր էլ որ գալիս էին, երկար չէին մնում: Հայուհին իր համար գրեթե դրամ չէր ծախսում, չնայած նրա կուսակցությունը, որն ակնհայտորեն նյութական խոշոր միջոցներ ուներ, նման կարևոր գործչի հանդեպ ամենայն հավանականությամբ շռայլ էր:

Ժանդարմ, 1907թ.

- Կուսակցության փողերը սուրբ են,- ասում էր նա յուրայիններին ու ապրում էր միայն կարտոֆիլով, սոխ-հացով:

«Մայրիկն» ամեն օր կուսակցության գործերով առնվազն երեք տուն էր մտնում, բայց երբեք կառք կամ հանրակառք չէր նստում: Տնից ելնելիս ուշադիր աջ-ձախ էր նայում, որպեսզի ստուգի՝ արդյո՞ք իրեն չեն հետևում ու հենց որ ամենաչնչին կասկածն էր ունենում, մտնում էր ներս, փակվում:

Հայուհին քայլում էր արագ ու մերթ ընդ մերթ անսպասելի հետ էր շրջվում, այնպես որ նրան լրտեսելը շատ դժվար էր:

Մի օր, չնայած մեր խիստ հսկողությանը, նա անհետացավ: Դա կարող էր նշանակել, որ կամ աննկատ հեռացել է Ռոստովից, կամ տանը հիվանդ պառկած է: Այս դեպքում, իհարկե, հարց կարող էր ծագել, թե ինչո՞վ է սնվում, որովհետև տուն այնպիսի մեկը չէր մտնում, որի հետ ուտելիք տանելը հավանական լիներ: Ինչ վերաբերում է անհայտ ուղղությամբ մեկնելուն, կարող էր նաև վտանգավոր հետևանքներ ունենալ, քանի որ նոր բնակավայրում, որտեղ ոչ ոքի հայտնի չէր նրա անցյալը, կասկածից զերծ կլիներ, ահաբեկչական գործունեությունը անկաշկանդ կշարունակեր:

Ես որոշեցի այս գործի բացահայտումը խուզարկու Լանիձեին վստահել, նախ որ նման էր հայի, և ապա, չնայած հազիվ մեկ տարվա ծառայությանը, աչքի էր ընկել մտացիությամբ, դիմացկունությամբ, իր արածի կարևորության ըմբռնումով: Ես նրան թույլ տվեցի գործել այնպես, ինչպես հարմար է գտնում, այն պայմանով միայն, որ չբացահայտվեր, վրան կասկածներ չհրավիրեր: Լանիձեին շոյեց նման կարևոր հանձնարարու-

թյուն վստահելը, մանավանդ երբ իմացավ, որ պառավը, ում մեր խուզարկուները «Շուկա»[1] գաղտնանունով էին կոչել, «կարևոր ապրանք է»՝ կուսակցությանը զենք մատակարարելու մեծ փորձ ունի: Ես Լանիձեին զգուշացրի նաև, որ ոչ մի դեպքում չպետք է այնպես անի, որ իրեն քաղաքից դուրս հանեն: Հեղափոխականները, երբ ուզում էին որևէ խուզարկուի հետ հաշվեհարդար տեսնել, հաճախ էին այդ միջոցին դիմում, իրենց հետևողին ամայի մի տեղ էին հասցնում ու, անսպասելի հետ շրջվելով, վերացնում: Բացի քաղաքից դուրս չգալուց, Լանիձեն իր անմիջական պետին հանդիպելու էր միայն գիշերները, պահնորդական բաժանմունք ընդհանրապես չէր մտնելու:

Հայուհու տանը շատ մոտ մի կեղտոտ, բարձիթողի «դուքան»[2] (պանդոկ) կար: Լանիձեն, առանց հապաղելու, գնաց, հանդիպեց տիրոջն ու մատուցողի աշխատանք խնդրեց,



խոստանալով գոհանալ սնունդով, ձեղնահարկի անկյունում քնելու տեղով ու հաճախորդների թողած թեյավճարով: Նրան ընդունել էին: Առաջին օրը նա ակնդետ հետևել էր պառավի տանը, բայց առանձնահատուկ ոչինչ չէր նկատել: Հաջորդ օրը, սակայն, տեսել էր, թե ինչպես է նրա տան առաջ մի կառք կանգնում, ու կառապանը, որ, արտաքինից դատելով, հայ պիտի լիներ, մի ծանր զամբյուղ է իջեցնում, մուտքի մոտ դնում: Նա նախ զանգն է տալիս, հետո մտրակի կոթով թխկթխկացնում, ու վերջապես դուռը բացվում է: Լանիձեն երեի հետքը գտած որսորդի բերկրանքով տեսնում է ծեր հայուհու հայտնվելը: Խուզարկուն իսկույն կառապանին հենց «Կառապան» գաղտնանունով էլ կնքում ու մոտը նշում է կառքի համարը (15): Ապա պանդոկապանին ասում է, որ իրեն վատ է զգում, ու ձեղնահարկ է բարձրանում, որ շարունակի «աշխատանքը»՝ հսկողությունը: Ձեղնահարկի պատուհանը պառավի տան ճիշտ դիմացն էր: Որպեսզի իր հիվանդ լինելուն հավատան, Լանիձեն ձևացնում է, թե ատամնացավ ունի՝ քիթ-բերանը կապկպում, մերթընդմերթ խուլ տնքում է:

Ահա նա պատուհանի առաջ նստած նոր իրադարձությունների է սպասում, միաժամանակ մտածում, որ կառապանն ամենայն հավանականությամբ պայմանական ազդանշանը գիտեր, որովհետև նախ զանգը տվեց, հետո դուռը թխկթխկացրեց, իսկ պառավն էլ ծանոթի պես բարևեց: Եթե զամբյուղի մեջ, որ կառապանը հանձնեց, իրենց կուսակցության համար կարևոր բան կա, հայուհին շտապ ինչ-որ մեկին կտեղեկացնի կամ այդ կապակ-

Դաշնակցական Խեչո

ցությամբ ինչ-որ մեկին կընդունի: Մեր խուզարկուն հսկողությունն սկսում է երեկոյան ժամը 5-ին, բայց ժամերն անցնում են, ոչինչ էլ տեղի չի ունենում: Այն աստիճանի, որ Լանիձեն քնով է ընկնում: Նա արթնանում է հազիվ լսելի ճռնչոցից: Լրտեսը ցնցվում, վեր է ցատկում: Այդպես, չնչին աղմուկից վեր է ցատկում լարված սպասման պահին նիրհողը: Ճռնչում է դիմացի տան դուռը, բացվում, ու խուզարկուն տեսնում է, թե ինչպես հայուհին դուրս եկավ, չորս կողմը նայելուց հետո արագ հեռացավ: Մի ակնթարթում մեր գործակալը քանդում է դեմքի փաթաթանները, անաղմուկ քայլելու համար հագնում է ձգախեժե կոշիկները, փողոց է իջնում, սկսում հետևել ծեր կնոջը: Նա Նախիջևանի ամայի փողոցներով հասնում է Դոնի առափնյան, մի տան դռնից, որը բաց է լինում, մտնում է ներս: Դա վաղահաս բանջարեղենի առևտրական, Կարապետ անունով մի հարուստի տունն էր:

Որոշ ժամանակ անց «մայրիկը» դուրս է գալիս, երկու հոգու էլ է այցելում (ինչպես հետագայում հետաքննությունը պարզեց, մեկը երկաթուղային ծառայող էր, մյուսը՝ ուսուցչուհի): Հանդիպումներն ավարտելուց հետո հայուհին վերադառնում է տուն, իսկ Լանիձեն շտապում է անմիջական պետի մոտ: Երկուսով վճռում են, որ պառավը «գիշերային թռչնակ» է դարձել, հետևաբար Լանիձեն պետք է մնա պանդոկում, հսկողությունը շարունակի գիշերները: Դա Լանիձեի, նրան կցված երկու օգնականների համար ծանր փորձություն դարձավ: Գիշերային հսկողությունը կատարողական բարդություններ ունի, վտանգից էլ զերծ չէ, քանի որ հետապնդողը հեշտությամբ կարող է հետապնդվողի վերածվել, ծուղակում հայտնվել: Այս դեպքում լրացուցիչ բարդությունն այն էր, որ հայուհին իրոք հոգնել չգիտեր, լույսը դեռ չբացված այցելուներ էր ընդունում, այցելության գնում: Ինչ էլ լիներ, հսկողությունն այնքան լավ էր կազմակերպված, որ Կովկաս ու Թուրքիա զենք փոխադրողների մի ամբողջ խումբ բացահայտվեց: Պառավի տան խուզարկության ժամանակ գտնվեց արդեն հիշատակված զամբյուղը, որը լեցուն էր մարտական հրազենով ու փամփուշտով: Հաշվի առնելով առաջացած տարիքը, մենք հայուհուն ազատ արձակեցինք, բայց նա դժգոհեց, ինձ ասաց, որ կուզեր կիսել իրենց իրավունքների համար պայքարող ու այժմ բանտում տառապող քաղաքական համախոհների ճակատագիրը:

Հայուհին համոզված հայրենասեր էր, իր կարծիքով ամեն հայ վաղ մանկությունից մինչև մահանալը, եթե անգամ շարքերում լինելու պատիվը չուներ, պիտի նպաստեր Դաշ-

— 121 —

леніемъ храбрости и отваги главарей. Ярко среди нихъ отмѣчены: нѣкіе Андраникъ, «Кери», «Хечо» «Дро», и другіе. Особенно памятно въ народѣ, какъ отрядъ (чета), сражаясь съ полудикимъ курдскимъ племенемъ Мазрикъ, наносившимъ постоянный вредъ армянамъ, совершенно его уничтожилъ; затѣмъ, какъ дашнакцаканы, среди бѣлаго дня, заняладѣли въ Константинополѣ турецкимъ государственнымъ банкомъ (Отоманскій банкъ) и оттуда начали диктовать турецкому правительству свои условія, причемъ дѣло уладилось только благодаря вмѣшательству русскаго посла.... но это было давно, до 1906 года...

նակցության հաջողություններին: Հարկ էր տեսնել, թե ինչպես էին պառավի դեռևս գեղեցիկ աչքերը բոցավառվում, երբ հայտարարում էր՝ «Եթե որևէ մեկը սիրում է իր ժողովրդին, նրա համար ամեն, ամեն ինչ զոհում է, նրա ազատության համար մեռնելը գերագույն երջանկություն է համարում: Իսկ ով ի վիճակի չէ այդպիսի սիրո, ավելի լավ է ասպարեզից վերանա»:

Կուսակցությունը, որի մասին նման ոգևորությամբ էր խոսում հայուհին, 1890 թ.-ին Թիֆլիսում հիմնել են մի խումբ հայ մտավորականներ, որոնց մեծ մասը ուսանել է Պետերբուրգի ու Մոսկվայի համալսարաններում: Իր մեջ ներառնելով մինչ այդ գոյություն ունեցած ազգային մյուս շարժումները, կուսակցությունը կոչվել է Դաշնակցություն, որը «միություն» է նշանակում, իսկ անդամները՝ «դաշնակցական», այսինքն՝ «ուխտակից»:

Այս միությունը նպատակ էր դրել Թուրքիայում ապրող հայերի իրավունքները ընդունել տալու համար պայքարել թուրքական կառավարության դեմ: Իրոք, փաստ էր, որ թուրքական իշխանությունները հայերի հետ ընդվզեցուցիչ կամայականությամբ էին վերաբերվում՝ հաճախ, ընդհուպ մանուկներին ու ծերունիներին, ամբողջ գյուղեր բնաջնջում:

1905 թ.-ից Դաշնակցությունը, հավատարիմ մնալով հանդերձ նախնական ծրագրին, սկսեց կապեր հաստատել ռուսական հեղափոխական կուսակցությունների հետ և հզոր կազմակերպություններ ստեղծեց Ռոստովում, Նախիջևանում, այլ քաղաքներում: Այս կազմակերպությունները քարոզչական լայն գործունեություն էին ծավալում, դրամ, զենք հայթայթում ու տրամադրում Թուրքիայում մարտնչող կամավորականներին: Կամավորական խմբերի զինված պայքարը դյուցազներգությունների նյութ է դարձել, որոնք փառաբանում են հրամանատարների խիզախությունն ու հանդգնությունը: Նրանցից մի քանիսը, հատկապես Անդրանիկը, Քեռին, Խեչոն, Դրոն և ուրիշներ, անմոռաց հիշատակներ են թողել: Ժողովուրդը դեռևս չի մոռացել այդ խմբերից մեկի արշավանքը, որը գրեթե իսպառ բնաջնջեց հայերին բազում չարիքներ պատճառած քրդական կիսավայրենի մազրիկ ցեղը: Բոլորը հիշում են նաև Դաշնակցության հանդուգն հարձակումը, որն օր ցերեկով Կոստանդնուպոլսում գրավեց Օսմանյան դրամատունն ու թուրքական կառավարությանն իր պահանջներն առաջադրեց: Փոխզիջումը կայացավ ռուս դեսպանի միջամտության շնորհիվ:

Բայց դա վաղուց էր՝ 1906 թ.-ին...

Հայկական կամավորական խմբերի մարտական գործողությունները Թուրքիայի տարածքում, որոնք ապաստան ու հենարան էին գտնում Ռուսաստանում, Իրանում, ի վերջո այնպիսի միջազգային խառնաշփոթ հարուցեցին, որ ռուսական կառավարությունը ստիպված եղավ պայքարել կուսակցության դեմ: Նախ բռնագրավվեց եկեղեցու ունեցվածքը, երբ հաստատ համոզմունք առաջացավ, որ հոգևորականները կուսակցությանը դրամ ու զենք են մատակարարում, պատըսպարում են նրանց, որոնց փնտրում է ոստիկանությունը, և բոլոր միջոցներով նպաստում են հեղափոխական խմորումներին:

Հայ հոգևորականների բռնաճնշումները լուրջ դժգոհություն հարուցեցին, կուսակցությունն անհրաժեշտ համարեց ահաբեկչական գործունեություն որդեգրել: Կովկասի ռուսական վարչակազմի ամենատարբեր աստիճանի բազմաթիվ պաշտոնյաներ հայ հեղափոխականների վրիժառության զոհը դարձան:

Կովկասի փոխարքան՝ իշխան Վորոնցով-Դաշկովը ի վերջո հասկացավ, որ նման լարված ու թշնամական հարաբերությունները իշխանության ու մի ամբողջ ժողովրդի միջև, ինչը հոգևորականների հալածանքներին զուտ կրոնական բնույթ էր տալիս, չեն կարող երկար շարունակվել: Նա շտապեց իրավիճակը հարթել՝ եկեղեցիների ունեցվածքը վերադարձվեց, իսկ հանցագործություն կատարած անհատները դատարանի առաջ կանգնեցին, գործող օրենքով պատժվեցին:

Թուրքական պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը հավաստեց իր անկեղծ ռուսասիրությունը, նրա զավակները ռուս զինվորների կողքին հեղեցին իրենց արյունը: Այդ պատերազմի ընթացքում հատկապես աչքի ընկավ փառապանծ հրամանատար Դրոն, որն իր վաշտի գլուխն անցած բազմաթիվ անգամներ հասավ թուրքական առաջավոր գիծ, դիրքերը խարխլեց, մարդկային լուրջ կորուստներ պատճառեց:

Հարկավոր է նշել նաև, որ Հայաստանի անկախության հռչակումից հետո երկրի կառավարությունը, որը մեծ մասամբ կազմված էր դաշնակցականներից, լայն արտաբացությամբ հյուրընկալեց ռուս վտարանդիներին՝ ոչ մի կուսակցության չպատկանող մտավորականներին ու սպաներին: Ավելին, նրանց մեծ մասին նույնիսկ ծառայության ընդունեց, պատասխանատու պաշտոններ վստահեց:

Ֆրանսերենից թարգմանեց՝
ԳՐ. ՋԱՆԻԿՅԱՆԸ

1. Բնագրում՝ հայերեն:
2. Բնագրում՝ հայերեն:

ԴՐՕՇԱԿ
100 տարի առաջ

№ 3—4 (216) XXI ՏԱՐԻ ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ 1911

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

Դրօշակ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

Հազուագիւտ տօն

(Մի ազգի վերածնունդը)

Իտալիան տօնում է իր վերածնունդեան յիսնամեակը:

Տուրին, Հռոմ, Ֆլորենցիա - Պապական հայրենիքի հեղաբրբիր աշխարհի առաջ իրենց գեղեցիկ հանճարների արգասիքը, իրենց բովանդակ հմայքը:

Միքել Անջելոյի եւ Դանտէի վշտահար ուրուականները սաւառնում են այդ շքեղ հանդէսների վրայ՝ Մաձձինիի, Գարիբալդիի կարմրավառ էմբլեմների հետ: Եւ ցնծում է ամբողջ Ապենինեան թերակղզին՝ հայրենասիրական գինովութեան մէջ:

Յիսուն տարի առաջ կատարուեց մի «հրաշք»: Ստեղծուեց մի նոր ազգ, բարձրացաւ մի նոր տարր համաշխարհային էվոլիւցիայի թատերաբեմում - իտալական ազգը: Առաջ նա չկար: Կային այլատարր բեկորներ միայն, այնքա՜ն տարբեր իրենց հատուածային առանձնայատկութիւններով, լեզուով ու բարքով... «Իտալիա» անունը լոկ աշխարհագրական արտայայտութիւն էր... եւ ոչ միայն ըստ Մետերնիխի:

Հռոմի աշխարհակալ կայսրութեան անկումից յետոյ, այդ մեծ երկիրը, ինչպէս յայտնի է, բաժանուել էր բազմաթիւ հատուածների, որոնցից իւրաքանչիւրը կազմում էր զատ, ուրոյն պետութիւն: Եւ մի դարաւոր անհաշտելի հակամարտութիւն այդ փոքրիկ պետութիւնների մէջ... Քանի փորձութիւն, քանի արիւնոտ եղբայրասպան պատերազմներ: Յիշենք միայն այն սոսկալի դարաշրջանը, որ պատկերացրել է «Ատրվածային կատակի» հեղինակը, որ նա ողբացել ու անիծել է դժոխապատում իր գրչով...

Այդ բեկոր-բեկոր կացութիւնը յարատեւեց մինչեւ 19-րդ դարը. Սիցիլիա, Նապոլ, Հռոմ, Ֆլորենցիա, Պիզա, Վենետիկ, Ջենովա, Տորինո՝ մի-մի անկախ կղզիացած օջախներ, իւրաքանչիւրը հզօրապէս նախանձախնդիր իր ուրոյն աւանդութիւններին: Բնութիւնը իր կողմից նպաստաւորում էր այդ պառակտումը: Կլիմա, աշխարհագրական դիրք, ցեղային տարբերութիւն՝ հզօր անջրպետներ... Նրանք խաղացել են իրենց դերը եւ ուրիշ ազգային գիտակցութիւնների կազմաւորման պրոցեսի մէջ:

Այո, չկար անգամ, ընդամենը մի դար առաջ, ընդհանուր ազգային լեզու, խօսուն լեզու: Հին իտալականը, մեր գրաբարի պէս, մոռացուած մի գոյութիւն էր. նրանով գրում էին սակաւաթիւ մտաւորականներ, բայց նրանով չէին խօսում: Ինչ զարմանք, որ ազգային միութեան գաղափարը եւս երկար ժամանակ գոյութիւն չունէր զանգուածների մէջ: Նոյնիսկ 19-րդ դարին նա դարձեալ միայն փոքրաթիւ «առանձնաշնորհեալների» սեփականութիւնն էր: Այս բառը սովորաբար գործածւում է վայր, բացասական իրողութիւններ թարգմանելու համար, նրանով որակւում են աշխարհի տէրերը, ժողովրդի եւ աշխատանքի հարստահարիչները, դահիճները:

Այստեղ նա ունի տրամագծօրէն հակառակ իմաստ: Այստեղ նա թարգման է ամենաբարձր իրողութիւնների, ամենավսեմ առաքինութիւնների: Բայց այստեղ եւս «առանձնաշնորհեալը» «աշխարհի տէրն է»... Նա այն պատմական փոքրամասնութիւնն է, որ կարողանում է դասեակ դարերի առաջ, երբեմն նոյնիսկ դարեր առաջ, նշմարել ապագայի խաւարի մէջ լուսապայծառ արշալոյսը. նա այն պատմական փոքրամասնութիւնն է, հերոսների ու դաղանդների հանդիսաւոր բոյլը, որ արտակարգ հոտառութեամբ օժտուած զուշակում ու նախատպատրաստում է անցքերը, դարբնում է համայնքների ճակատագիրը, մաքառում է հազարաւոր խոչընդոտների դէմ, սլանում է փոթորիկների միջից, ամուր գրկած իր գաղափարական եւ յաղթական դրօշը: «Առանձնաշնորհեալը» դա Դանտէն է, Բուօնարոտտին, դա Մաձձինին է, Գարիբալդին...

Երբ մտնում էք Ջենօվայի հնադարեան համալսարանի դռներով, մի հին, մաշուած արձանագրութիւն մուտքի պատին անմիջապէս գրաւում է ձեր ուշադրութիւնը: Մի կարճ ֆրազ, ընդամենը չորս բառից, նուիրուած ջենօվացի մեծ հայրենասէրի, Մաձձինիի յիշատակին. *Volesti e l'Italia fu!* (Դու կամեցար եւ Իտալիան եղաւ):

Անշուշտ, ամեն տեղ եւ ամեն ժամանակ, մարդիկ, հերոսները իրենց բարեպաշտ խանդավառութեան մէջ տրամադիր են չափազանցնել նշանաւոր ռահվիրաների պատմական կարեւորութիւնը, արժէքը: Իտալացիները եւս մատուցել են առատութեամբ իրենց տուրքը այդ զուտ մարդկային, համաշխարհային տրամադրութեանը: Բայց կայ եւ ճշմարտութեան բաժինը այդ խանդավառ ձօների մէջ:

«Ցնորք», այդպէս էր հնչում դեռ անցեալ դարու քառասնական ու յիսնական թուականներում «ազգային միութեան» կոչը Ապենինեան թերակղզու վրայ: Ի՞նչ միութիւն կարելի էր իրագործել այդ տխուր Բաբելոնում: Ի՞նչ ազգային գիտակցութիւն կարող էր մշակուել այդ այլատարր ու հակամարտ հատուածների մէջ...

Միանգամայն սկեպտիկ էին, թերահաւատ եւ յոռետես: Զանգուածները՝ խորապէս անտարբեր եւ տգէտ ու անշարժ: Ոչ ոք չէր հաւատում, չէր էլ մտածում: Բայց հաւատում եւ մտածում էր պատմական փոքրամասնութիւնը: Հաւատում ու գործում էին մի բուռ Մաձձինիները: Նրանք գրկեցին ընդհանուր իտալական ազգի դատը եւ առաջ անցան... արիւնի ու արհաւիրքի մէջ... Հայրենիքը՝ մի լայնածաւալ զնդան... Մատնուած աւստրացիներին, բուրբոններին, միահեծան իշխաններին եւ իշխանիկներին: Դաւադրութիւնը՝ միակ զէնքը: Տերրորը՝ միակ ազդու խարազանը: «Մենք քիչուոր ենք, կը նահատակուենք, բայց մեր դիակների վրայ ուրիշները կը քալեն եւ կը յաղթեն...» Այդ նշանաբանն ընդունեցին իտալացի հայրենասէրները: Այդ նշանաբանը դարձաւ այնուհետեւ սեփականութիւն բոլոր ստրուկ ու մարտնչող ազգութիւնների, բոլոր խիզախ, հերոսական փոքրամասնութիւնների: Այդ նշանաբանով նրանք բարձրացան, յաղթանակեցին: Տարան իրենց հետ զանգուածները եւ կազմակերպեցին Հայրենիքը:

Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ

1918-1920 թթ.

Երևան, 2010, 616 էջ



1918-1920 թվականների Հայաստանի Հանրապետության խորհրդարանի գործունեությունը, դատելով մեր պետականության այդ շրջանի հանդեպ գիտնականների և հետազոտողների հարաճուն հետաքրքրասիրությունից, դեռևս ամբողջությամբ ու համապարփակ չի ներկայացվել մեր հասարակությանը: Կարելի է ասել՝ մինչ այս եղած անդրադարձները (Արարատ Հակոբյան, «Հայաստանի Խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920», ինչպես նաև առանձին պատմական ակնարկները) դեռևս հնարավորություն չեն տալիս ամբողջական պատկերացում կազմելու 1918-1920 թվականների Հանրապետության քաղաքական ղեկավար մարմնի պետականաստեղծ գործունեության, նրա կազմում ներկայացված քաղաքական կուսակցությունների աշխատանքի, ժամանակի քաղաքական մշակույթի, օրենսդրական դաշտի և օրենքների գործադրման մեխանիզմների մասին:

Ներկայացվող գիրքը, կարելի է ասել, անգերագնահատելի օժանդակություն է մեր այն ուսումնասիրողներին, ովքեր դեռ, բառիս ամենադրական իմաստով, կհանդգնեն անդրադառնալ այնպիսի մի թեմայի, ինչպիսին պետականաշինության հարատև գործընթացն է և, իհարկե, այդ գործընթացի ազգային ակունքները:

1918-1920 թվականների Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունների այս ժողովածուն հրատարակության է պատրաստվել Հայաստանի ազգային արխիվի գիտական խորհրդի որոշմամբ: Ժողովածուի գլխավոր խմբագիրն ու կազմողն է պատմական գիտությունների դոկտոր Ամասունի Վիլբաբյանը: Այստեղ ներկայացված են ինչպես արխիվներում պահպանվող, այնպես էլ ժամանակի մամուլում հրապարակված ՀՀ պառլամենտի նիստերի արձանագրությունները, որոնք լույս են սփռում ինչպես Հայաստանի օրենսդիր մարմնի երկուսուկեսամյա գործունեության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կայացման դժվարին գործընթացների և նորանկախ երկրի վարած ներքին ու արտաքին քաղաքականության հիմնահարցերի վրա:

Ասենք նաև, որ ժողովածուի հրատարակությունը նվիրված է 1918-1920 թվականների Հանրապետության Խորհրդարանի 90 և ներկայիս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 20-ամյակին: Գրքի հրատարակությունը հովանավորել է ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը, ում գնահատանքի խոսքով էլ բացվում է ժողովածուն. «Պետությունների կայացման գործում խորհրդարանները միշտ էլ կարևորագույն դերակատարություն են ունեցել հատկապես այն պարագայում, երբ խոսքը վերաբերում է պետականության առաջին քայլերին:

Հայաստանի առաջին հանրապետությունը ծնունդ առավ այնպիսի ժամանակներում, երբ ժողովրդին համախմբելու, կազմակերպելու հրատապ խնդիր կար, և պետական հիմքը ճիշտ հաշվարկների վրա կառուցելը մեծ պատասխանատվություն էր ենթադրում: Այս պայմաններում առանձնահատուկ էր երկրի օրենսդիր մարմնի՝ Հայաստանի առաջին խորհրդարանի առաքելությունը, որ ստանձնեց մի քանի դար պետականություն չունեցած ժողովրդի ներկայացուցչության դերը այդ ժողովրդի պատմության բարդ ժամանակահատվածում... Հայաստանի առաջին հանրապետությունն իր բազմակուսակցական խորհրդարանով և կառավարությամբ ազդարարեց պետականաշինության հիմնավոր փուլի մեկնարկը ժողովրդի կենսագրության մեջ... Օրենսդիր մարմինն իր գործունեությամբ դեռ անցյալ դարասկզբին ձեռնամուխ եղավ հայոց պետականությանն իրավաքաղաքական շունչ ու ոգի տալուն, Հայաստանի՝ որպես երկրի կերպարը ձևավորելուն»:

Ուսումնասիրության տեսանկյունից այս ժողովածուի մի շահեկան առանձնահատկությունն էլ այն է, որ կազմողները պահպանել են նյութերի ժամանակագրությունը: Նրանք ընտրություն կատարելիս առաջնությունը տվել են նախ՝ արխիվային փաստաթղթերին, ապա՝ կառավարող կուսակցության (ՀՅԴ) մամուլում զետեղված նյութերին, իսկ նրանցում նկատված սխալն ու թերին լրացրել մամուլի այլ օրգաններում, ինչպես նաև հետագայում հրատարակված ամսագրերում և առանձին հրատարակություններում զետեղված նյութերով: Պահպանվել է արձանագրությունների լեզուն և ոճը:

Ժողովածուն ունի նաև ընդարձակ հավելված, որտեղ զետեղված են Հայաստանի Խորհրդի կանոնակարգը, Հայաստանի պառլամենտի ընտրությունների մասին օրենքը, Հայաստանի կառավարության հայտագիրը, ինչպես նաև բազմաթիվ այլ փաստաթղթեր, որ սերտորեն առնչվում են խորհրդարանի գործունեությանը:

Այս աշխատությունը, ուր ի մի է բերված մեր առաջին խորհրդարանի գործունեությունն արտացոլող նյութերի մեծ մասը, ինչպես իրավացիորեն նշում են կազմողները, հասցեագրված է պատմաբաններին ու քաղաքագետներին և Հայաստանի առաջին հանրապետության պատմությամբ հետաքրքրվողներին:

Էդիկ Անդրեասյան

Աշոտի Պետյան

Ծնվել է **1952**թ. սեպտեմբերի 5-ին, Սիբիրում (Կեմերովոյի մարզ, f. Պրոկոպևսկ), բռնագաղթվածների ընտանիքում:
1967 Տեղափոխվել է Հայաստան, (f. Կիրովական) մշտական բնակության:
1969 Ընդունվել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան:
1972 Ընդունվել է Թբիլիսիի Գեղարվեստի Ակադեմիան:
1977 Գերազանցիկության դիպլոմով ավարտել է Երևանի Գեղարվեստա-Թատերական ինստիտուտը:
1988 Դարձել է ԽՍՀՄ Նկարիչների Միության անդամ:
1992 Անհատական ցուցահանդես Հայաստանի Նկարիչների Տանը, Երևան:
Անհատական ցուցահանդես Փարիզում «Դե Մոնպառնասե պատկերասրահում»:
1994 Անհատական ցուցահանդես Հալեպում (Սիրիա), Վաշինգտոնի «Ոթերզեյթ» պատկերասրահում, Լոս-Անջելոսում (ԱՄՆ):
1997 Անհատական ցուցահանդես Չիկագոյում և Ատլանտայում (ԱՄՆ):
Անհատական ցուցահանդես Հայաստանի Ազգային Պատկերասրահում, Երևան:
2001 Անհատական ցուցահանդես Բելգիայի Կնոք-Զոուդ քաղաքում:
Ցուցահանդես Մոսկվայի Նկարիչների Կենտրոնական Տանը:
2002 Անհատական ցուցահանդես Հայաստանի Նկարիչների Տանը, Երևան:
2005 Քանդակների անհատական ցուցահանդես, «Նրանք սպասում էին ձեզ միլիոնավոր տարիներ» խորագրով, Երևան:
2009 Արժանացել է ՀՀ Վաստակավոր Նկարիչի կոչման:

ԴՐՕՇԱԿ

Պատկերասրահ




россия в мемуарах
"ОХРАНКА"
Воспоминания руководителей политического сыска
ԴՐՕՇԱԿ